Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ
«ՀԱՅՐԵՆԻՔ» ԱԿՈՒՄԲ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐ

ԵՐԵՎԱՆ – 2011

ՀՏԴ 941(479.25):1/14:891.981-1
ԳՄԴ 63.3 (2Հ)+87.3+84Հ-5
Ն 661

Խմբագրական խորհուրդ՝
պատմական գիտությունների դոկտոր Ամատուն Վիրաբյան
պատմական գիտությունների թեկնածու Ավագ Հարությունյան
Կազմող՝ պատմական գիտությունների թեկնածու
Ռաֆայել Համբարձումյան
Վերծանումների խմբագիր՝ Վահան ծայրագուն վրդ. Օհանյան

Ն 661 Նժդեհ Գարեգին: Նորահայտ նամակներ / Խմբագր. խորհուրդ՝ Ա.Վիրաբյան, Ա. Հարությունյան.- Եր.: Հայաստանի ազգային արխիվ, 2011.- 58 էջ:

Վենետիկի Ս. Ղազար կղզում են պահվում Գարեգին Նժդեհի ցայսօր անհայտ ավելի քան 40 բանաստեղծություններ և 17 նամակներ՝ ուղղված իր վստահելի բարեկամներից մեկին՝ Հովհաննես Հովհաննեսյանին, որը դրանք 1971թ. սեպտեմբերի 29-ին հանձնել է Ս. Ղազարի մատենադարան: Նամակները բացառիկ նշանակություն ունեն 1920-1930-ական թվականների հայոց պատմության բազմաթիվ խեղաթյուրված իրողությունները ճշտելու համար: Դրանցում Նժդեհը տալիս է նաև Ցեղակրոնության եւ Տարոնականության մեկնությունները, որոնք է՛լ ավելի են ամբողջացնում դրանց էությունը բացահայտող իր սահմանումները:

ՀՏԴ 941(479.25):1/14:891.981-1
ԳՄԴ 63.3 (2Հ)+87.3+84Հ-5

ISBN 978-99941-878-7-4 © Հայաստանի ազգային արխիվ, 2011

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վենետիկի Ս. Ղազար կղզում պահող Գարեգին Նժդեհի բացառիկ արժէքաւոր նամակների պատճէնները, որոնց մէջ նաեւ նրա քառասունից աւելի՝ ցայսօր կորած համարուող քերթուածքները, ինձ է տրամադրել Կաթողիկէ Հայոց Հայաստանի առաջնորդ հայր Վահան Ծայրագոյն վարդապետ Օհանեանը: Գարեգին Նժդեհի ներքոզետեղեալ այդ եզակի, իսկ որոշ դէպքերում, իր իսկ բնորոշումով, «խիստ անձնական, չը հրապարակելի» նամակները ուղղուած են ԱՄՆ Ցեղակրօն Ուխտերի յայտնի գործիչ, 1930-ական թվականներին Հ.Յ.Դ. ԱՄՆ կենտրոնական կոմիտէի անդամ, Գարեգին Նժդեհի վստահելի ու սիրելի բարեկամներից մէկին՝ Յովհաննէս Յովհաննէսեանին: Ձեռագրերին կցուած է Ս. Ղազարի միաբան Սահակ վրդ. Ճեմճեմեանի հետեւեալ գրութիւնը.

«Ներփակ կան համբաւաւոր դաշնակցական գործիչ Նժդեհի նամակները, ուղղուած Յովհաննէս Յովհաննէսեանին: Սա վերջինս Ս. Ղազար բերած էր այս նամակները, եւ երբ մեկնելու վրայ էր, 27 սեպտեմբեր 1971ին, ես ստորագրեալս խնդրեցի իրմէ որ ինծի ձգէ: Ուրախութեամբ յանձնեց, յուսալով որ ես հրատարակեմ եւ ինքը իր կեանքի վերջաւորութեան գոնէ տեսնէ եւ ուրախանայ: Ապագային դիւանին համար օգտակար կրնան ըլլալ, Դաշնակցութեան պատմութեան:

Հ. Սահակ Ճեմճեմեան
Ս. Ղազար, 29 սեպտ. 1971»

Բանաստեղծութիւնները ո՛չ, բայց նամակները դժուարընթեռնելի են: Վերծանումին խանգարում է ոչ միայն շտապով գրուած լինելը եւ որոշ նամակների խունացածութիւնը, այլեւ այն հանգամանքը, որ դրանցում Նժդեհը գործածել է իր ստեղծած բազմաթիւ բառեր, որոնք մեր լեզուում չկան, ինչը մեծապէս դժուարացնում է անընթեռնելի բառը ինչ որ յայտնի բառի նմանեցնելով՝ կռահել թէ ինչ է գրուած... Ահա՛ այդ բառերը՝ ահաւորօրէն, ամենատգիտականութիւն, անշնչելի, անցեղաճանաչ, դաւակից, դաւամտութիւն, դիակնացած, դղրդագին քայլեր, երկարօրէն, ընկերադաւ, թշնամանալ, ժամանակասպանութիւն, ինքնանկարող, իրարեկերութիւն, խորհողութիւն, կիսամտաւորական, կուսակցաւէր, հակացեղակրօնութիւն, համագաղութայնացնել, հայրենաքանդութիւն, հայօրէն, հացապաշտ, հնարակեղծ, հպարտանք, ճարտարելու կարողութիւն, մանրօրէն, նախանձալի (նախանձով լի - Ռ. Հ.), պատկերամարտիկ, տգիտանք, ցեղանորոգ, ցեղաշարժում, ուժաստեղծ, քաջայոյս: Նշածս նամակներում Գարեգին Նժդեհը

տալիս է Ցեղակրօնութեան եւ Տարօնականութեան բացատրութիւնները: 1936թ. նամակներից մէկում նա հետեւեալ հաստատումն է անում. «**Տարօնականութիւնը - դա միեւնոյն Ցեղակրօնութիւնն է հասակն առած սերունդի համար**»:

Նամակները բացառիկ նշանակութիւն ունեն 1920-1930-ական թվականների հայոց պատմութեան բազմաթիւ անմեկնելի, յաճախ խեղաթիւրուած հարցերը ճշտելու համար:

Հայկական ցանկացած կառոյցի, ինչու չէ, նաեւ՝ամէն մի անհատի համար այդ նամակները դասագիրք են, որից նա կարող է իմանալ թէ Նժդեհի համար ինչ ասել է օրէնք, իրաւասութիւն, ժողովրդավար ղեկավարի ընտրութիւն եւ այլն: Փնտրելի են **ղեկավարի եւ կարգապահութեան, անհատի եւ հայրենիքի** զուտ հայի խառնուածքով ու էութեամբ բացայայտումը այդ նամակներում, որոնք օգնում են հասկանալու, որ գոյութիւն ունի նշուած երեւոյթների զուտ հայկական հոգեբանութիւնը, որը մի եզակիութիւն է դրանք բնորոշող համաշխարհային յայտնի ընբռնումների մէջ: Դրանք յայտանաբերել է ինքը՝ առանց այդ մասին որեւէ նամակի մէջ նման բան ասելու...

«Ժողովրդավար ղեկավար լինելու համար նախ պէտք է լինել խոր, անկեղծ, հոգեփոխիչ ապրումի մարդ: Այդ էլ բաւական չէ: Պէտք է լինել նաև՝ նոր գաղափարի, նոր ապրումի, նոր, վերակառուցող, աշխարհի մարդ: Սրա շրթունքներէն ծորէր զօրաւոր խօսքը, որէն հոգեւոր արիւն կաթէր: Այդ յատկութիւններին աւելացուր ամենէն անհրաժեշտը՝ **արիութիւնը**... Կարգապահութիւ՞ն: Ճշմարիտ կարգապահութիւն ասել է՝ շարքայինների հաւատ դէպի իրենց ղեկավարների ամէն վայրկեան Հայաստանի համար մեռնելու, յանդգնելու, մի բան ճարտարելու կարողութեանը: Շարքերի մէջ կա՞յ այդ հաւատը: - Ո՛չ չկայ: Իսկ չկայ, որովհետեւ ղեկավարների մէջ հերոսական - բարոյական գործելու, զոհաբերելու, քաջաբար մեռնելու տրամադրութիւն չկայ: Ուրեմն, շառլատանութիւն է խօսել կարգապահութեան մասին, երբ ղեկավարութեան պակասում են սովորական մահկանացուներին յատուկ առաքինութիւն... Ամեն ծառայութիւն, որ դառնում է վճարովի արհեստ՝ պղծւում է»,- գրում է Գարեգին Նժդեհը:

Նժդեհն այս նամակներում տալիս է նաեւ այն հարցերի պարզաբանումը, թէ ինչու գնաց Ամերիկա, ինչ արեց եւ ինչպէս արեց: 1936թ. նոյեմբերի 15-ի նամակում գրում է. «Ես չեկայ Ամերիկա ժողովրդականութիւն փնտրելու, այլ աշխատելու մեր ցեղի հոգու անսպառ հանքերում: Ամերիկան ոչինչ աւելացուց այն բանին, որ ես ստացած եմ Հայաստանէն, Լեռնահայաստանէն: Ամերիկան կուադաշտ չէ, որ նոր բան տար ինձ: Ամերիկայում ինձ յաջողուեց - հակառակ շատերի չկամութեան - ոտքի հանել հայոց ցեղը, ցեղայնութիւնը նորահաս

սերունդի մէջ: Իսկ ինձ յաջողուեց, որովհետեւ ես Ամերիկա եկայ որոշ առաքելութեամբ, որովհետեւ ես ունէի իմ որոշ ճամփան, ես գիտէի իմ գործը, իմ անելիքը: Ես չեկայ հրահանգելու եւ հրահանգներ կատարելու, ես եկայ հրահանգելու, ղեկավարելու»:

Նամակներից մէկում Նժդեհը խորհրդածում է. «Օհաննէս, մի ժողովուրդ, որը չգիտէ իր ներքին սրիկաները պատժել, չպիտի կարողանայ պատժել իր գոյութեան արտաքին թշնամիներին»:

Մէկ այլ նամակում, շարունակում է. «Ամեն անգամ - հաստատում է պատմութիւնը - երբ ժողովուրդը բարոյական քաջութիւն չէ ունենում պատժելու իր դժբախտութեան հեղինակներին, այդ միեւնոյն հեղինակների միջոցաւ պատմութիւնը պատժում է ժողովուրդին: Ահա՛, սիրելիս, թէ ի՞նչն է տագնապեցնում ինձ»:

1937թ. մի նամակում Նժդեհն արդէն զգում էր պատերազմի անխուսափելիութիւնը եւ մտածում էր իր հիմնադրած Ցեղակրօն Ուխտերից ստեղծել Հայաստանի անկախութիւնը վերականգնելու եւ հայութեան ինքնապաշտպանութիւնը վարելու համար լեգիոններ: «Այսօր,- գրում էր նա 1937թ. յունուարի 7-ի նամակում,- Ցեղակրօնութիւնը հող գտած կլինէր մեր բոլոր գաղութներում, ամէն գաղութ ստեղծած կլինէր ուխտածների իր լեգիոնը, այսօր մեր թիւը հասած կլինէր տասնեակ հազարի, եթէ մեզ յաջողուէր ժամանակին զինաթափել ներքին չարութիւնը՝ տգէտ ու նախանձալի»... Մէկ այլ անթուակիր նամակում յաւելում է. «Այժմ մենք տասնեակ հազարի հասնող Ցեղակրօններ պէտք է ունենայինք Սփիւռքի մէջ, գաղութ գաղութ... Թուրքն իր կինը տղամարդ-զինուոր է դարձնում այսօր, մենք, իսկ մե՞նք...»:

Իսկ 1936թ. յունուար 25-ի նամակում Նժդեհը գրում է. «Հրէշը իր կաշին եւ ոսկորը թուրքէն եւ բոլշեւիկէն փրկած իր ընկերոջ կեանքի եւ գործի դէմ դաւելու համար էապէս ծառայեց թուրքին եւ բոլշեւիկին... Կեանքիս մէջ անձս, անձնականս պաշտպանելու վատութիւն չեմ ունեցել- կազմակերպւած դաւը միայն զգւանքս է շարժել եւ խորապէս ցաւեցրել հոգիս այն պարզ պատճառով, որ Հայութեան, տարագիր Հայութեան հոգեւարքի օրերի՛ն իսկ ընկերոջ դէմ դաւելու փաստեր կան: Գուցէ կարեւորութիւն տայի, եթէ գիտակցութիւնս չ՛ասէր - «թրքոբոլշեւիկ տապարէն քո սրի շնորհիւ փրկւած թշւառականին արժէ՞ պատասխանել»:

Ռաֆայէլ Համբարձումեան

ՆԱՄԱԿՆԵՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻՆ

1.

29 սեպտեմբերի 1933թ.

Սիրելի՛ս Յովհաննէ՛ս,

Քաջայոյս եմ, որ լաւ ես, եւ որ լաւ են տղաները:

Ցեղակրօնութեան նուաճումներին հետեւում ես, անշուշտ: Այդ շարժումը ապրեցնելու եւ զայն համագաղութայնացնելու համար արժէ ոչ թէ ապրել եւ գործել, այլ եւ մեռնել: Շատ ուրախացայ՝ կարդալով դասախօսութեանդ մասին:

Աշխատիր մօտենալ Ասատուրին[1] եւ Մալխասին[2]: Արմենակը[3] խոստացած է գրել «Յառաջ»-ին Ցեղակրօն շարժման մասին, գրե՞ց, թէ ոչ՝ թող գրէ:

Բարեւիր տղաներին:

Համբուրելով քեզ՝ քոյդ **Նժդեհ**

1933, 29 սեպտ.
Ն-Ֆնո

2.

[1933թ.]

Սիրելի Օհաննէս,

Ամսիս 13-ին կ'ելնեմ Բոստոն:

Եւ կմնամ մինչեւ ուրբաթ գիշեր: Չգիտեմ թէ [Հ.Յ.Դ.] կ[ենտրոնական] կոմիտէն այդ երկու երեկոներէն ո՞րն է ընտրել - հինգշաբթի թէ ուրբաթ: Ստուգէք ու նշանակէք Ուստրինը:

Համբոյրներով՝ քոյդ **Նժդեհ**

P. S. Օհաննէս, մեր Գաբրիէլին ըսէ, որ կուզեմ հետս տանիլ մի ցեղակրօնական դրօշակ՝ նման Ուոտրթաունի դրօշակին:

Արդ, խնդրէ իմ կողմից, որ ընկեր ուսանողին պատրաստել տայ մի հատ մինչեւ գալս:

Նոյնը:

3.

5 յունուար 1935թ.
Սոֆիա

Իմ սիրելի, բայց Հոյլ Օհաննէս,

Ընկալեալ սովորութեամբ նախ ասեմ՝ Շնորհաւո՛ր Նոր Տարի:

Այդ առթիւ իմ հազար բարեմաղթանքների հետ հազար եւ մէկ նորագիր Ցեղակրօններ Ձե՛զ: Շնորհաւորելով Մարիամին, համբուրում եմ երեխաներին:

Լսի՛ր այժմ եւ լրջօրէ՛ն լսիր: Գիտես, անշուշտ, որ ռամկավար կոչուած տականքը փորձեց գաղթահայ դպրոցներին պարտադրել Պօլսի «Բարի լոյս» դասագիրքը, որ թրքականութիւն կհոտի: Այդ «դասագրք»ի մէջ - աւելի ճիշտը թրքագրքի մէջ - ասուած է՝ «Թուրքիան է իմ հայրենիքը», «Քեմալն է իմ մեծ հայրը», թրքական դրօշակն է... եւ այլն...

Հակաազգայնական տականքի այդ թրքասիրական արարքը մնաց չպատժուած բարոյապէս: Հիւանդանալու աստիճան զայրացած եմ: Կամ մեր հայրենասիրական ջղերն էլ բթացել են կամ չգիտենք պրոպագանդ անել: Օհաննէ՛ս, հակաազգայնականների այդ արարքէն չ'օգտուելը - ոճիր է ե՛ւ մեր կուսակցութեան, ե՛ւ մեր դատի, ե՛ւ մեր դրօշակի դէմ: Ձայրոյթի, կատաղութեան ու զզւանքի մի մեծ ալիք պիտի բարձրացնել Ամերիկահայ գաղութի մի ծայրէն մինչեւ միւսը: Դա պիտի դարձնել հակաթուրք պրոպագանդի զէնք: Պէտք է մասնաւոր օր հռչակել՝ «Պայքար թրքասիրական ախտի դէմ» նշանախօսքով: Այդ պրոպագանդին պէտք է լծել մեր բոլոր ուխտերը: Ցեղակրօնին պէտք է շիկացնել թրքատեցութեամբ: Այդ պրոպագանդի մէջ իր զզուելի մերկութեամբ կ'երեւայ եւ հակադաշնակցական տականքը: Weekly-ի[4] մի համարը յատկացրէք այդ «հակաթուրք պրոպագանդի» օրուան: Այդ «օր»ը կ'արդիւնաւորէ եւ «Ցեղակրօնների օր»ը:[5] Նամակս կարդա ընկ[եր] Տեստեկիւլին[6]: Թող Կ[արմիր] Խաչի կ[ենտրոնական] վարչութիւնը մասնաւոր շրջաբերականով լուսաբանէ իր մասնաճիւղերը եւ դպրոցներ կազմակերպել տայ արծիկների համար:

Երկու ամիս յետոյ կվայելէք էջմիածնի պատուիրակը:[7] Նրա խօսքը քաղցր թոյն է: Խորհրդային իշխանութիւնը սատանայի իր գործը կատարում է «սուրբի» միջոցաւ: Նա եկած է մի նոր հակադաշնակցական կազմակերպութիւն առաջացնելու մեր գաղութներում - «էջմիածնի լումա» անուան տակ: ՀՕԿը[8] քաղաքականապէս վարկաբեկուած է, նրանից, Ամերիկայէն դուրս, չի կարելի օգտուել: «էջմիածնի լումա»ն աւելի թանձր դիմակ է - բոլոր վտանգուած տականքները կ'երթան թափուելու այդ նոր Արշակաւանը:

Պարզ է, խորհրդ[ային] իշխանութիւնը էջմիածինը պահում է նրանից օգտուելու համար, եւ միայն նա է օգտւում, եւ օգտւում է մեծապէս: Նա դիտմամբ է ուշանում, որ մեր 9 անմեղների[9] վերաքննութեան խնդիրը այս կամ այն ձեւով կարգադրի: Էջմիածինն ուրախ է, որ մեր 9 անմեղ ընկերները խստագոյնս պատժւած են: Եթէ Կոպերնիկը[10] հոդ է, «համբուրէ իմ կողմից»: Նամակս կարդա իրեն: Իրեն գրել եմ բժ. Քէշիշեանի հասցէով: Գրել եմ եւ Արմենակին՝ Կոստանեանի հասցէով: Լուռ է Արմենակը:

Մոռացա՞ք ինձ, աւելի՛ լաւ: Մոռացէք, միայն թէ աշխատէք, որովհետեւ թշնամին աշխատում է:

Բոլորիդ բարեւում է Թափառականը[11], որ այժմ նստած է մօտս:

Վաղը մեկնում եմ շրջաններ:

Համբոյրներով՝ **Նժդեհ**

4.

15 նոյեմբերի 1935թ.
Սոֆիա

Սիրելիս Օհաննէ՛ս,

Ստացայ անթուակիր նամակդ: Անթուակի՛ր, այդ լա՛ւ է: Երջանիկները ոչ թէ միայն ժամացոյց չեն սիրում, այլ եւ՝ օրացոյցը: Անթուակիր նամակների հեղինակները յաճախ ենթագիտակցօրէն մատնում են իրենց երջանկութիւնը: Ի՞նչու գիտնալ, թէ ո՞ր օրն է, ո՞ր ժամը, երբ երջանիկ են նրանք: Սկսել ես ժամանակից դուրս ապրել - այդ լաւ է, լաւ նշան է: Կուզէի, որ յետ այսու բոլոր նամակներդ անթուակիր լինէին: Այս փոքրիկ նախաբանից յետոյ անցնիմ քիչ հետաքրքրող մէկ-երկու խնդիրների: Սիրելի՛ս, չեմ զարմանում, որ Իփէկեանը[12] տկարացաւ՝ մարդկօրէն, դաշնակցականօրէն, բաւական չէ, որ մէկը իր գլխի մէջ այբուբեն, ուսմունք, տեսութիւն ունենայ՝ ժողովուրդը իր հոգեւոր խորքի մէջ ցնցել, շարժել կարողանալու համար: Չեմ ասում, թէ Իփէկեանը տկար մարդ է - չեմ ճանաչում նրան - պնդում էր, սակայն, որ ժողովրդավար-ղեկավար լինելու համար նախ պէտք է լինել խոր, անկեղծ, հոգեփոխիչ ապրումի մարդ: Այդ էլ բաւական չէ: Պէտք է լինել նաեւ՝ նոր գաղափարի, նո՛ր ապրումի, նոր, վերակառուցող աշխարհի մարդ: Սրա շրթունքներին դի՛ր զօրաւոր խօսքը, որէն հոգեւոր արիւն կաթէ: Այդ յատկութիւններին աւելացուր ամենէն անհրաժեշտը՝ արիութիւնը - շրջապատի մտաւոր ծուլութիւնը, հոգեւոր մանրուքը, կեղծիքը, տգիտանքը, չկամութիւնը, նախանձը առաքելաբար կոխելու եւ անցնելու քաջութիւնը, եւ կստացուի ժողովրդի մարդը, ղեկավարը:

Հասարակական գիտութիւններին անծանօթ ողորմելին միայն կարող է իր անյաջողութիւնները արդարացնել իր նախորդի ժողովրդականութեամբ: Ես չեկայ Ամերիկա ժողովրդականութիւն փնտռելու, այլ աշխատելու մեր ցեղի հոգու անսպառ հանքերում: Ամերիկան ոչինչ աւելացուց այն բանին, որ ես ստացած եմ Հայաստանէն, Լեռնահայաստանէն: Ամերիկան կուաղաշտ չէ, որ նոր բան տար ինձ: Ամերիկայում ինձ յաջողւեց - հակառակ շատերի չկամութեան - ոտքի հանել հայոց ցեղը, ցեղայնութիւնը նորահաս սերունդի մէջ: Իսկ ինձ յաջողւեց, որովհետեւ ես Ամերիկա եկայ որոշ առաքելութեամբ, որովհետեւ ես ունէի իմ որոշ ճամբան, ես գիտէի իմ գործը, իմ անելիքը: Ես չեկայ հրահանգելու եւ հրահանգներ կատարելու, ես եկայ հրահանգելու, ղեկավարելու:

Այդ անարժան դերի համար լէգիօն դերակատարներ կարելի է գտնել մեր կեանքում: Ճշմարիտ ղեկավարներ են պակասում: Ժամանակները մեծ են, գործիչները՝ փոքրիկ - ահա՛ պատճառը օրւայ մեր դժբախտութեան: Ի՞նչ խօսք, որ կարելի է վատ գործիչ լինել, բայց՝ անկեղծ մարդ: Ցաւում եմ, որ Իփէկեանը իր անկեղծութիւնն էլ կասկածի տակ է դրել՝ իր նախորդի չփնտռուած ժողովրդականութեան քար նետելով:

Փարիզաբնակը[13] շարունակում է իր դաւերը Ցեղակրօնութեան դէմ, եւ մեր շրջանի դէմ: Այդ մարդը վերջերս իր փարիզեան մի ճառի մէջ ասել է՝ «քաղաքականութեան մէջ երկու «ոչ» եւ մի «այո» պիտի ասել: Սա նոր ձեւի քաջազնունիականութիւն[14] է: Փարիզցին էլ է գտնում, որ Դաշնակցութիւնը անելիք չունի (քաղաքական անելիք): Տեսնու՞մ ես օրւայ իմաստութիւնը?! Դա քաղաքական զգուշաւորութիւն չէ, այլ ընկածութիւն, պարտուողականութիւն: «Զգոյշ պէտք է լինել», դա հոգեբանօրէն նշանակում է՝ պէտք է ձեռնածալ նստել, նստել երեկւայ պարսիկի եւ երկայնամազ չինացու նման: Ցեղակրօն՝ ասել է ջահել ոյժ, խռովքոտ ոյժ, պահանջկոտ ոյժ, որը չի հաշտւիր ան - Հայաստան կեանքի հետ, որը կարող է գործ պահանջել, արիւնի զոհաբերութիւն պահանջել - մի բան, որից սարսափում են այն բոլորը, որոնք վաղուց է թաղած յեղափոխական, մարտական, արիւնի Դաշնակցութիւնը, եւ սկսած են «կուլտուրականութիւն» քարոզել, ոտանաւոր գրելու սէր երգել: Ոչ թէ չեն հասկանար Ցեղակրօնութիւնը, այլ չեն սիրեր ցեղակրօնը, որովհետեւ այդ վերջինը Դաշնակցութիւնը կպաշտէ որպէս ուխտ, կրօն, ցեղի ոյժը, եւ ոչ թէ որպէս սովորական կուսակցութիւն: Ցեղակրօնութիւնից դուրս բոլոր ճամբաները տանում են դէպի հակադաշնակցականութիւն, դէպի հակադաշնակցական Հոմ: Մոսկաւ նոր լոզունգ է շպրտել մեր գաղութները՝ ապակուսակցականացում (որ

ասել է՝ մա՛հ Դաշնակցութեան): Պէտք է ապակուսակցականացնել գաղութահայութիւնը - դա ասել է՝ պէտք է սպանել Դաշնակցութիւնը: Ապակուսակցական ախտը արմատ է նետել եւ մեր շարքերում: «Կուլտուրական» դաշնակցականն էլ սկսել է հաշտուել անՀայաստան կեանքի հետ: Օրւայ մեծագոյն վտանգն է դա, որի դէմ պէտք է պաշտպանուել ամենայն վճռականութեամբ: Դաշնակցութիւնը պիտի ապրի՛, օհ, պիտի ապրի որպէս մարտական Դաշնակցութիւն:

Համբոյրներով՝ Նժդեհ

5.

[1935թ.]

Սիրելիս Օհաննէս,

Ստացայ նամակդ: Շնորհակալութիւն տուածդ տեղեկութեանց համար: Խօսում ես Արսէնի[15] մասին - արժէ՞, ափսոս չէ թուղթն ու մելանը: Ուղեղը ջրակալած այդ ոչնչութիւնը ատելութեան իսկ արժանի չէ: Յանուն տղաների փրկութեան՝ անցեալ տարի չուզեցինք աղմուկ հանել: Դու դեռ չես մոռացել իր եւ Կոպերնիկի «Տկարութիւնը քրիստոնէական»:

[Հ.Յ.Դ.] Կ[ենտրոնական] Կոմիտէ կազմի մասին ասելիք չունեմ: Հոգեբանօրէն միատա՞նր էք: Լաւ ընկերներ կան այդ մարմնի մէջ, աշխատէք արտաքին ազդեցութիւններից զերծ պահել Կ[ենտ]կոմը: Փարիզաբնակ չարիքն աշխատում է: Այդ վատի քոսոտ «սօցիալիզմն» է դաւում Ցեղակրօնութեան դէմ: Ցեղակրօնութիւնը ճշմարիտ սօցիալիզմին դէմ չէ: Հայ վարժապետի հասկացած սօցիալիզմին – որը դժբախտ Հայաստանում մեր օրով դարձաւ բոլշեւիզմ - դէմ պիտի լինի ամէն մի դաշնակցական, եթէ քաղաքական սրիկայ չէ դա: Սօցիալիզմէն մինչեւ բոլշեւիզմը մի թիզ է, եւ ոչ աւելին: Բոլշեւիզմը - դա սօցիալիզմի հոգեւոր պիճն է: Մասնաւորապէս Ամերիկայում աչքը բացած մեր պատանիների եւ երիտասարդների համար չարիք է «սօցիալիզմը»: Սօցիալիզմը դասակարգային վարդապետութիւն է, դա միշտ էլ ենթադրում է դասակարգեր, դասակարգայնացած հասարակութիւն: Դա հարւածում է, կոտորակում, տկարացնում ազգը – ժողովուրդը: Իսկ Ցեղակրօնութիւնը ձգտում է մի եւ անբաժանելի դարձնել ազգը: Թուրքէն զարնւած, կիսւած, թուրքին հարեւան լինել, եւ «սօցիալիզմից» բարբաջել, ասել է «իգացեալ» լինել, կենսաբանօրէն անբարոյական լինել, անհայրենասէր լինել: Սօցիալիստէն ամէն բան դուրս կուգայ, բայց ոչ մարտիկ, զինւոր: Մի ժողովուրդ, որն իր փիլիսոփայութիւնը, աշխարհայեցողութիւնը, կրօնն անգամ չի յարմարեցնում իր

ինքնապաշտպանութեան պահանջներին՝ անբարոյական է եւ անապագայ: Մի ժողովուրդ, որն իր զէնքերն ընտրելու ժամանակ հաշւի չի առնում իր թշնամիների զէնքերը – քաղաքականապէս տգէտ ու տհաս ժողովուրդ է: Թուրք թշնամի ունենալ եւ Ցեղակրօնութեան դէմ լինել - դա առնուազը ազգային ընկածութիւն է: Փարիզաբնակ սրիկան ոչ թէ դէմ է ցեղակրօն անունին, այլ՝ գաղափարաբանութեան: Նա սարսափի մէջ է՝ չլինի թէ Ամերիկայի մեր կազմը թարմանայ, զտուի, մարտականանայ: Նա եւ նմանները դէմ են, որովհետեւ 1-2 տարի յետոյ այլեւս անկարելի կդառնայ դաշնակցական Ամերիկան շահագործել որպէս պարսկական խանութիւն: Ընդամէնը մի ամիս առաջ Փարիզի Հոմընդմէնը իր ընդհանուր ժողովում, «միաձայնութեամբ» յայտարարեց, թէ չէ մասնակցելու Մայիս 28-ի տօնակատարութեան: Շաւարշն[16] այդ սերունդը «Յառաջի» մէջ յայտարարեց «չարլստօն[17] սերունդ»: Ահա՛ փարիզցի մեր թշւառական սօցիալիստների հասցրած սերունդը: Նորահաս սերունդի այդ քայլը՝ թուք էր նետւած Ցեղակրօնութեան դէմ հաջող ընկածների երեսին: Զգո՛յշ, զգոյշ, էլի զգոյշ պիտի լինել, սիրելի Օհաննէս, ծանօթ սրիկաները անունի դէմ չեն միայն: Այսօր՝ անունը, վաղը՝ վարդապետութիւնը կխլեն Ամերիկահայ նորահասէն, եւ այսպիսով կփլչի այն հաւաքական սիրտը, հոգին, մտայնութիւնը, որ ստեղծւեց վերջին երկու տարւայ ընթացքում: Փոխել անունը, ասել է՝ ուխտերին ներշնչել այն համոզումը, որ թէ Դաշնակցութիւնն իր արածն ու անելիքը չգիտէ: Դա կնշանակէ՝ մղել նորահաս սերունդը մտածելու, թէ Դաշնակցութիւնը ինքը ներքնապէս «պառակտւած է»: Իսկ ունեցաւ ամերիկահայ նոր սերունդն այդ համոզումը՝ նա կփլչի հոգեպէս եւ կպաղի Դաշնակցութիւնից: Այն բոլորը, որոնք անուան փոփոխում են պահանջում՝ դաւում են, դաւաճանում - գիտակցօրէն թէ անգիտակցաբար – թէ Դաշնակցութեան եւ թէ ամերիկահայութեան ապագայի դէմ: Այս մասին եղիր արթուն (խոստովանեմ՝ ամբողջ յոյսս քեզ վրայ է, Օհաննէս ջան): Եթէ այս տարի ոյժ տաք Ցեղակրօնութեան դաւանանքի պրոպագանդին եւ եթէ զգուշաբար լուսաբանէք արթուն տղաներին՝ դաւադիրները կմեռնեն:

Ի՞նչպէս պահեց իրեն ընկ. Իփէկեանը: Մէկը գրում է նրա մասին՝ «բարեբախտաբար կմեկնի»: Չէի կարծում, որ կդժգոհէք նրանից: Ի՞նչ է պատճառը: Նոր գործիչ կուզէք: Զգո՛յշ եղէք ընտրութեան մէջ – յետ այսու գործիչը պէտք է լինի ցեղակրօն՝ իր ապրումներով: Եթէ եալանչի[18] սօցիալիստ փէիլեվան[19] լինի – չարիք կդառնայ: Ուրեմն, վախեցէք Փարիզի դաւադիրի գործակալներից եւ սօցիալիզմի զուռնան փչողներից: Գ-ն[20] դժւար թէ գայ: Չեմ կարծում, որ օգտակար

լինի: Փարիզցու[21] հետ է: Եթէ դոքտոր Հայկ Ասատրեանին տանէք – չէք զղջայ: Ցեղակրօն է, պատրաստուած եւ անկաշառ:

Օհաննէ՛ս, ախպէրս, առողջութիւնս լաւ չէ: Ժամանակ եւ սիրտ չունեցայ բժշկելու: Վերադարձայ և Բալկանը կիսակործանուած գտայ: Բալկանը վերականգնուեց, բայց առողջութիւնս իսպառ քայքայուեց: Քեզ գրում եմ՝ կողքիս ցաւեր զգալով: Կեանքիս մէջ առաջին անգամ լինելով, սկսել եմ տարակուսիլ, թէ մէկ էլ պիտի տեսնեմ Հայոց լեռները: Երեւի հէնց այդ հոգեվիճակն է պատճառ, որ երէկ մի ճառիս մէջ կ'ըսէի - «Զգւանքի եւ դառնութեան վայրկեաններիս հայեացքս սուր կփնտռէ, քանզի երբ ձեռքս սրիս վրայ դնեմ՝ կհաւատամ, թէ չպիտի մեռնիմ հեռու հայրենի լեռներից»... Կարդա՛ այդ ճառս՝ «Հայ սուրը» («Ազատ խօսք»ի եւ «Հորիզոն»ի մէջ): Հաւաքիր շուրջդ տղաներին - ...[22]

Յակոբին, Ստեփանին եւ կարդա ու բացատրէ տղաներին:

Իմ եւ Եփիմէի համբոյրները բոլորիդ:

Նժդեհ

P. S. Թոյլ մի տաք, որ «Հայրենիք Weekly»-ի մէջ ցեղակրօն անունը անգլերէն գործածի:

Ո՞վ ասեց, որ դա անհրաժեշտ է: Ի՞նչպէս թարգմանել կուբրատիզմը (բուլղարական), ֆաշիզմը, հիթլերիզմը, ֆրանսիզմը եւ այլն: Ցեղակրօն անունը աւելի խօսուն է, քան հազար բացատրութիւններ անգլերէն: Փոխելով անունը՝ շարժումն ու կազմակերպութիւնը աստիճանաբար կդառնայ «ո՛չ միս, ո՛չ էլ ձուկ» (հոգեբանօրէն), դա կճապաղանայ, կդառնայ անորոշ, անբովանդակ, անուղի, անանուն - դա կհամրանայ:

Նոյնը

Ստեփանը գանգատուել է, որ իրեն գրած չեմ: Սխալւում է, վերջերս բացիկ մը գրած եմ իրեն: Միթէ Ստեփանը չգիտէ, որ իր նման ոսկի տղաներին ես չեմ կարող մոռանալ: «Հայ սուրը»՝ առ մեր Կոստանեաններէն:

Նոյնը

6.

[1936թ.]

Սիրելի Օհաննէս,

Կարդացիր, անշուշտ Գեւորգին գրածս նամակը: Դեռ մխւած եմ անկողինիս: Ցունկս շարունակում է մնալ ուռած: Վաղը կտանին ինձ

ծնկոսկրս ռենտգէնեան ճառագայթներով լուսանկարել տալու: Լեարդիս հիւանդութիւնը բաւական չէր: Առաջին անգամն է կեանքիս մէջ, որ այդքան երկար կպառկիմ հիւանդութիւնից: Իմ մասին - ինչ որ է - այդքանը կբաւէ: Այժմ լսէ այն մասին, որն ինձ աւելի է չարչարում, քան հիւանդութիւնս: Որովհետեւ երկար չեմ կարող նստած մնալ անկողինիս մէջ՝ ստիպւած եմ կարճ գրել: Ահա՛ թէ ինչ՝

1. Ինչպէս եւ սպասելի էր՝ Ցեղակրօնութիւնն էլ ունեցաւ իր ներքին թշնամիները: Գիտէի, որ որոշ «ընկերներ» - մասնաւորապէս Ամերիկայէն դուրս - ի տես Ցեղակրօն ուխտերի - կգալարուէին գլխից զարնւած օձի նման: Այդ հրէշները իրենց պատժւած կհամարէին: Չէին կարող հանգիստ նստել, երբ Ցեղակրօնութեան ալիքը կբարձրանար եւ կսպառնար հեղեղել մեր բոլոր գաղութները: Եւրոպայում, որոշ տեղեր, ինքնաբուխ կերպով, սկսեցին ուխտեր ստեղծել: Հարաւ[ային] Ամերիկան երկու անգամ դիմեց, խնդրեց, որ մեկնիմ այդ հեռաւոր գաղութը՝ նորահասը կազմակերպելու: Յունաստանի պատգամաւորական ժողովը հրաւիրեց, Ֆրանսան խնդրեց եւ այլն, եւ այլն: Հող կար ամէն տեղ, կսպասէին ամէն տեղ, բայց միայն վերջերս պարզւեց – որ ծանօթ դաւադիրը[23] շարժման մէջ է դրել իր գործակալները Ցեղակրօնութեան դէմ հաչելու եւ քարեր գլորելու համար: [Հ.Յ.Դ.] Բիւրօն, դեռ իմ Ամերիկա եղած ժամանակ, կգրէր, կխնդրէր, որ փութացնենք Ցեղակրօն ուխտերի կանոնագրութիւնը, «որպէսզի զայն պարտադրենք արտասահմանի մեր բոլոր մարմիններին»: Կուզէին, որ օր առաջ արտասահմանը օգտւի «Ամերիկայի քարմ օրինակից»: Եւ արտասահմանը կսպասէր: Իրերի այդ դրութեան մէջ զարմանալի կլինէր, եթէ դաւադրութեան եւ նախանձի ձեւը մեքենայութիւնների չդիմէր: Գիտես, նա մարդիկ ունի - իրեն հոգեկից - գրեթէ բոլոր գաղութներում: Պէտք է երիտասարդացնել, թարմացնել Դաշնակցութիւնը՝ կգրէր Բիւրոն: Եւ Ցեղակրօնութիւնը աշխարհ կուգար, որպէս «գարնանային ջրեր», որպէս թարմացուցիչ մի հոսանք - կուգար ջահելացնելու Դաշնակցութիւնը: Բայց ծանօթ թայֆան, որը դաշնակցական գործ ասելով հասկանում է - Դաշնակցութեան արխիւներով զբաղւելը միայն՝ իր ազդեցութեան տկարացումը տեսաւ Ցեղակրօնութեան մէջ եւ դաւեց նրա դէմ: Շաբաթ առաջ Բուքրէշի «Արազ»ը[24] քար նետեց Ցեղակրօնութեան դէմ: Այդ լրբենի ելոյթներով դաւադիր խմբակը - որը երկրորդ տարին է, ինչ կդաւէ Բալկանի եւ իմ դէմ - կաշխատէ ոչ թէ միայն դժուարացնել Ցեղակրօնութեան տարածումը, այլ եւ կուզէ հարուածել զայն Ամերիկայի մէջ: Քեզ, Արմենակին-դոքտորին եւ այն բոլորին, որոնք հոգի տւին մեր շարժումին, կմնայ սրբազան կատաղութեամբ պաշտպանել Ցեղակրօնութիւնը: Հետեւում եմ

«Weekly»ին: Բաւական չէ ուխտերի արտաքին կեանքը տալ: Արտաքին լուսանկարչութիւնը չ'ապրեցներ Ցեղակրօնութիւնը: Շարժման էութեան, դաւանանքի մասին ոչինչ կարելի է գտնել «Weekly»-ի մէջ: «Արազ»ը իբրեւ թէ ծեւի դէմ է: Ոգի՛, ոգի՛, ոգի՛ չկայ: Ոտանաւորներ, անվերջ ոտանաւորներ արտասանելու փոխարէն պէտք է Ցեղակրօնութեան դաւանանքը ժողովրդականացնել: Վերջերս ինձ տեղեկացրին ձեր շրջանի - Բոստոնի - ուխտերի տարեդարձի տօնակատարութեան մասին: Նամակագիրը ասում է, 50-60-ից չէր անցներ ներկաների թիւը: Խորապէս ցաւեցի: Նիւ Եորքից գրում են՝ «մեր փայլուն եւ բազմամարդ հանդէսին կբացակայէին մտաւորականները»: Օհաննէս, սիրելի՛ս, գիտեմ, շատ ես զբաղուած, բայց գիտեմ եւ այն, որ դու եւ Արմենակը ոչինչ պիտի խնայէք Ցեղակրօնութիւնը վառ պահելու Ամերիկայում եւ աշխատելու, որ դա համագաղութայնանայ: Արմենակին կգրեմ շուտով: Յոգնեցայ, ոտքս ցաւում է, վերջացնեմ:

Համբոյրներ քեզ, Արմենակին եւ բոլոր իդէալիստ ընկերներին:

Նժդեհ

Իմ եւ տիկնոջս բարեւները Մարիամին, համբոյրներ երեխաներին:

Նոյնը

7.

25 ապրիլի 1936թ.
Սոֆիա

Սիր[ելի] Յովհաննէս,

Չգիտեմ, ստացե՞լ ես նամակս՝ ուղղուած Կոստանեանների հասցէին: Այսօր գրեցի նաեւ Արմենակին, խնդրելով որ կարդայ քեզ: Երկու խօսքով կրկնեմ գրածներս:

Վերջերս Բուքրէշ, Ռումանիա լոյս տեսնող մեր թերթը, «Արազ»ը, լրբութիւն ունեցաւ մի խմբագրական գրելու Ցեղակրօնութեան դէմ: «Հիթլեր կհոտի» ասելով՝ այդ թերթուկ մրոտողը կ'եզրակացնէ՝ «Ինչ կարիք կայ Ցեղակրօն Ուխտերի, երբ Դաշնակցութիւնը ինքնին մի ուխտ է»: Այդ թերթը՝ թելադրուած որոշ դաւադիրներէ՝ ծիգ կընէ նախապաշարել մեր կ.[ենտրոնական] կոմիտէութիւնները եւ ազգայնական հայութիւնը Ցեղակրօնութեան դէմ: Դիակնացած սօցիալիզմը չէ, որ կխօսի այդ թշւառականի մէջ, այլ անձնական շնականութիւնը: Եթէ Բուքրէշի դաւադիրը անպատիժ մնաց՝ թեւ պիտի առնեն եւ ուրիշները: Բացի այդ՝ սրա եւ նմանների հակապրոպագանդի շնորհիւ, Ամերիկայից դուրս, արտասահմանում կարող է մոլորանք ստեղծուել ցեղաշարժման դէմ: Քեզ, որպէս Ցեղ.[ակրոն] Ուխտերի կենտր[ոնական]

վարչութեան advisor-i (խորհրդականի) եւ կ[ենտրոնական] կ[ոմիտէի] անդամի, կմնայ <u>վճռապէս եւ անյապաղ կերպով</u> անել հետեւեալը՝

1. Թելադրել կենտր[ոնական] վարչութեան, որ բողոքէ Ձեր կ[ենտրոնական] կոմիտէին «Արազ»ի հակացեղակրօն (իր խորքի մէջ հակադաշնակցական) ընթացքի դէմ:

2. Խնդիր յարուցել Ձեր կենտր[ոնական] կոմիտէի մէջ եւ վերջինի կողմից դիմել [Հ.Յ.Դ.] Բիւրօին, խնդրելով, որ վերջինը անպատիժ չթողնէ «Արազ»ի ելոյթը, որից անմիջապէս օգտուեցին բոլշեւիկ թերթերը:

3. Գրել Ռումանիոյ Մեկուսի կոմիտէին եւ բացատրութիւն պահանջել իր թերթի թշնամական ելոյթի համար:

Օհաննէս, սիրելի՛ս, այդ 3 կէտերը գործադրել տուր, որովհետեւ մասնաւորապէս աշխարհի այս փափուկ օրերին ամէն աշխատանքի եւ զոհաբերութեան արժանի է Ցեղակրօնութիւնը: Անմիջապէ՛ գրէ՛ առաջդ քայլերի մասին:

Համբոյր քեզ եւ տղաներին:

Քոյդ Նժդեհ

8.

25 յուն.[իսի] 1936թ.

Սիր[ելի] Օհաննէս,

Ստացայ նամակդ: Ուրախ եմ, որ Վ. Նաւասարդեանն[25] է ուղարկուած տեղդ: Սրտի տէր մարդ է: Գիտէ փարիսեցիօրէն կուրծք ծեծող թշւառականը տարբերել ուղղափառից: Ինքն ուղղափառ է, Մարքսի մօրուքին - սոցիալիզմին - ոչ սիրահար: Կմնայ, որ մօտենաք իրեն, մօտենաք ջերմօրէն, որպէսզի հասկանայ ձեզ: Չվիրաւորուէք նրա այս կամ այն արտայայտութիւնից, եւ հեռու պահէք ձեզ:

Վ-նը[26] Ցեղակրօնութեան հետ էր, նրա ջատագովը: Մեր եալանչի պօլսական սօցիալիստները - մութ կիրքից մղուած - Ցեղակրօն շարժման առջեւ դժուարութիւններ հանելու նպատակով - նամակներ են գրել [Հ.Յ.Դ.] Բիւրօին եւ վախ յայտնել, թէ կուսակցութեան մէջ կուսակցութիւն կարող է ստեղծուել, եւ այլն, եւ այլն: Գիտես, թէ ո՞րի թելադրանքով է եղած դիմումները Բիւրօին: Նախանձի շէյթանը[27] չէր քնած, երբ մենք հոգի կուտայինք նորահաս սերունդը բերելու եւ կապելու եռագոյնին: Դաւը շարունակւում է Ցեղակրօնութեան եւ իմ դէմ: Կեանքիս մէջ անձս, անձնականս պաշտպանելու վատութիւն չեմ ունեցել - կազմակերպուած դաւը միայն զգւանքս է շարժել եւ խորապէս ցաւեցրել հոգիս այն պարզ պատճառով, որ Հայութեան, տարագիր Հայութեան հոգեվարքի օրերին իսկ ընկերոջ դէմ դաւելու վատեր

կան: Գուցէ կարեւորութիւն տայի, եթէ գիտակցութիւնս չ'ասէր - «թրքо-բոլշեւիկ» տապարէն քո սրի շնորհիւ փրկուած թշւառականին[28] արժէ՞ պատասխանել:

Ինչ որ է, այդ չէ էականը: Դուք, օգտուելով Վ-ի ներկայութիւնից, պէտք է համոզէք Բիւրօն, թէ Ցեղակրօնութեան դէմ քար նետողները ինտրիգանտներ են եւ ոչ ուղղափառ դաշնակցականներ: Քննադատութեան չի դիմանար այն փաստարկութիւնը, թէ «չգիտենք դեռ ինչի՞ կվերածւի Ցեղակրօնութիւնը Ամերիկայում»: Ցեղակրօնութիւնը կձգտէ դաստիարակել մարտիկը: Եթէ Դաշնակցութիւնը չէ դադարել մարտական լինելուց՝ չի կարող դէմ լինել Ցեղակրօնութեան: 2-3 տարի յետոյ - եթէ Ցեղակրօնութիւնը իր շուրջը չհաւաքեց նորահաս սերունդը - ՀՕԿը (իմա՛ Խ. Հայաստանը) կլափի հայ մանկտին, պատանեկութիւնը եւ երիտասարդութիւնը: Պէտք է աճապարել քանի դեռ ուշ չէ համագաղութայնացնելու Ցեղակրօնութիւնը, այլապէս Դաշնակցութիւնը կմեռնի շատ բնական մահով - ծերանալով: Վերջերս Դրօն[29] ինձ մօտ էր, խոստովանեց, որ ինքն էլ ժամանակին Բիւրօի ուշադրութիւնն է հրաւիրել Ցեղակրօնութեան շարժման վրայ, եւ որ Բիւրօն իրեն պատասխանել է, թէ այդ շարժումն անհրաժեշտ է Ամերիկայի համար: «Արազը» մրոտողի վրայ լաւ տպաւորութիւն չի թողել այն պարագան, որ Ուխտերը Նժդեհի լուսանկարը կգործածեն որպէս մարկա: Գիտես, Օհաննէս, որ ես տղաների ցանկութեան դէմ էի, որ ես մի գրութեամբ դիմած եմ Ցեղ[ակրօն] ուխտ[երի] կ[ենտրոնական] վարչութեան եւ խնդրած, որ իմ լուսանկարի փոխարէն գործածեն իմ ուսուցչի՝ Ռոստոմի լուսանկարը: Այդ պարագան պրովոկացիաների պատճառ է տուել: Այդ մասին պարտք եմ դնում քեզ վրայ, որ դու Վահանին կարդաս իմ ձեր վարչութեանն ուղղուած գրութիւնը: Այդ գրութիւնը Ցեղ[ակրօն] Ուխտ[երի] կ[ենտրոնական] վարչութեան արխիւում կգտնես: Քո օրով էր, դու ադվիզօր[30] էիր: Վահանը մօտիկից ճանաչում է մեր Արմենակին-դոքտորին: Արմենակին ասա, որ Վ-ին մօտիկ լինի:

Ինչպէս երեւում է Թափառականի եւ իր երկու դաւակիցների[31] (հասկացիր՝ հացակիցների) գրութիւնը՝ ուղղուած Հ[այ] Կարմիր Խաչի կենտր[ոնական] վարչութեան, լուրջ տարաձայնութիւններ է ստեղծել Հ[այ] Կ[արմիր] Խաչի կ[ենտրոնական] վարչութեան մէջ: Շրջանիս կոմիտէները խնդրած էին այստեղի Գթ[ութեան] խաչի շրջ[անային] վարչութեան, որ 2-3 նամակներ գրելու համար ամսականով քարտուղար չպահի, եւ որ քարտուղարին տրուելիք գումարը տրուի տասի չափ շատ կարեւոր եւ հին, վետերան ընկերների: Միաժամանակ դիտել էին տուել, որ հանրային գործիչը (այն էլ՝ գթութեան գործով զբաղուող) իրաւունք չունի 2-3 ամսականով պաշտօններ ունենալ, որպիսին է

Փիլիպոսեան կոչուած ախտաւոր մէկը: Թափառականը, որը այլ խնդիրներով դատի տակ էր, միացաւ այդ ախտաւորին եւ ծանօթ մարդու[32] գործակալին, ու աղմուկ հանեց, թէ Դաշնակցութիւնը կուզէ կուսակցականացնել կ[արմիր] խաչը, որ Գթ[ութեան] խաչն անկախ է, որ Ջամալեանը[33] իրենց այդպէս է ասել եւ այլն: Այդ իմաստով գրութիւն մը կ'ուղղեն նաեւ Հ[այ] կ[արմիր] խաչի կենտր[ոնական] վարչութեան:

Ընկերուհի Սիրանուշի (Տեստեգիլի) նամակից այն տպաւորութիւնը ստացայ, որ կենտր[ոնական] վարչութեան մէջ տարաձայնութիւններ կան - կան անկախականներ եւ Հ[այ] Կ[արմիր] Խ[աչ]ը կուսակցականացնելու կողմնակիցներ: Անկախականները - մոլորուած Թափառականի պրովոկատորական նամակից - դառնացած են, որ Նժդեհը թոյլ է տուել, որ կ[ենտրոնական] կ[ոմիտէն] կոնտրոլ բանեցնէ Գթ[ութեան] խաչի վրայ: Երկրորդ պարտականութիւն եմ դնում ուսերիդ, որ երկու խօսքով լուսաբանես հ[այ] կ[արմիր] խ[աչի] վարչութիւնը: Մեր մարմինները երբէք դէմ չեն եղել Գթ[ութեան] խաչի անկախութեան: Գործակցութեան եւ կոնտրոլի նման մի բան եղել է Գթ[ութեան] խաչի գոյութեան առաջին օրից: Գթութեան խաչի մէջ տեղաւորուած երեք տղամադկանց բարոյական արժէքը հասկանալու համար բաւական է հաշուի առնել նրանց յարուցած աղմուկը Դաշնակցութեան կոնտրոլի դէմ: Թափառականը իր մութ եւ ակնյայտնի արարքներով ապացուցեց մի բան - որ ինքն արժանի չէր տարիների այն պաշտպանութեան, որ տրուած էր իրեն իմ կողմից: Նա այժմ էլ քեզ ծանօթ մարդու գործակալների հետ է: Խոստովանիմ, որ ես էլ չէի ճանաչում Թափառականին: Այդ դժբախտը քամքով լեցուն մի թորբայ[34] է եղել, ոչ թէ մարդ: Տկար է բարոյապէս, կեցուածք չունի եւ այդ իսկ պատճառով դաւող, եւ վատերին գործակցող: Եթէ այդ մարդը տղամարդ լինէր - մինչեւ հիմա տասն անգամ սնձնասպան եղած պիտի լինէր կամ էլ պատժած պիտի լինէր իրեն ամբողջ տասը տարի ահաւոր կասկածանքի տակ պահողներին: Այդ մարդը, որն առաջին օրերին ամբողջ ընտանիքով նետուեց Ցեղակրօնութեան աւազանը՝ այժմ գործում է Ցեղակրօնութեան դէմ՝ միացած մի քանի փուշտերի: Դեռ չմեռած՝ մեռնողների թիւն պատկանում է եւ այդ խեղճը: Նա էլ է կարծում, որ ագռաւի իր ծիրտը բաւական է, որ ծովն ապականի: Կախակայուած է 2 տարով: Արժանի չէ ոչ թէ բարեկամութեանդ, այլ բարեւիդ:

Համբոյրներով՝ **Նժդեհ**

1936, 25 յուն.
Սօֆիա
Քանի Վահանը հոդ է, ինձ գրիր յաճախ:

9.

1 սեպտեմբերի 1936թ.

Սիրելի Օհաննես,

Ստացայ նամակդ: Գրում եմ քեզ որոշ բաներ, որոնք պէտք է մնան - առայժմ միայն քո սեփականութիւնը: Գրում եմ, որ իրազեկ լինես, եւ ըստ այնմ վարես «նաւդ»:

1. Երեւի չես հետեւում «Յառաջ»ին, այլապէս պէտք է գիտցած լինէիր այն, որի մասին որ գրում եմ քեզ: «Յառաջ»ի 24 յունիս համարի մէջ երեւացին Սուրէնի «Բաց նամակներ»ը: Սուրէնը - Դրօն է: Նա նոր երգ է սկսել երգել... «Մենք պարտաւոր ենք մոռանալ մեր թշնամութիւնը նրա հանդէպ (խօսքը այսօր Հայաստանում նստած բոլշեւիկեան ոյժի մասին է): Մենք պէտք է վերջ տանք մեր հակառակութեան: Պէտք է հաշտուինք»... եւ այլն:

Նա գրել է, որ «մեր պայքարը աւելորդ է եւ եթէ կուզես մենք չենք հասկանում մեր ազգային եւ քաղաքական շահերը»...

Ինչպէս տեսնում ես - դա նոր օրիանտասիոն է, որն ընդունելու դէպքում Դաշնակցութիւնը պէտք է մեղայ ասէ Քաջազնունուն, որ «յիմարութիւն» ունեցաւ ժամանակին չընդունելու «Դաշնակցութիւնը անելիք չունի»ն: Գիտես, որ Սուրէնը ոչ մտաւորական մէկն է, ոչ էլ քաղաք[ական] խորհողութեան տէր, որ նման բաներով զբաղի:

Նրան թելադրել են, եւ նա էլ անխորհուրդ կերպով հրապարակ է նետել նոր «Դաշնակցութիւնը անելիք չունի»ին:

Գիտես, որ նման խնդիրներ կարող են յարուցել միայն մեր ընդհանուր ժողովներում, եւ որ միայն ընդհ[հանուր] քաղ[աքականութիւնը] կարող է Դաշնակց[ութեան] քաղ[աքական] գիծը փոխել:

Գիտես, թէ ո՞վ է - մութի մէջ - կանգնած Սուրէնի թիկունքում: Սուրէնը մինչեւ վերջերս կզբաղւէր իր սեփական գործերով, սակայն, մեկէն եւ անսպասելի կերպով ելաւ ասպարէզ:

Երբ Վ-նը[35] «Դաշնակցութեան օրայ»[36] առթիւ անցեալ տարի Ֆրանսայում կճառէր՝ «Հայ Հայրենիքն է հայի համար եւ ոչ թէ հայը՝ հայրենիքի - այս է Դաշնակցութեան դաւանանքը: Հայ անհատը ամէնից առաջ, եւ ամէն բանից վեր»... Երբ այսպէս կհասկացուէր Դաշնակցութիւնն ու իր դաւանանքը, իսկապէս որ պէտք է ընդունենք, թէ «մեր պայքարը աւելորդ է»: Վ-եանի համար Հայրենիքը միջոց է, անհատը՝ նպատակ: Նրա համար Հայրենիքը երկրորդական բան է, անահտն է «ամէն բանից առաջ եւ ամէն բանից վեր»: Միջոց - Հայրենիքը չի պաշտուիր, եւ նրա համար չեն մեռնիր: Նպատակ - անհա՛տն է սուրբը, «ամէն բանից վեր»ը, գերագոյնը:

Միջոցը միշտ էլ ծառայել է նպատակին: Եւ որովհետեւ ըստ իր էութեամբ հակադաշնակցական «դաշնակցական» Վ-եանի՝ Հայրենիքը միջոց է, նա պիտի ծառայի եւ մեռնի զգւելի անհատի, պատահական հայ կարապետի համար: Նման միջոց - Հայրենիքը պէտք է կործանուէր եւ կործանուեց: Նմանը պէտք է անցնէր Հայրենիքների մասին աւելի բարձր բարոյական հասկացողութիւն ունեցող թուրքի եւ բոլշեւիկի ձեռքը, եւ անցաւ: Վ-ի քարոզած Հայրենիքը սովորական շուկայ է, ապրուստի միջոց «ամէն բանէ վեր» անհատի համար, իսկ նմանը չէ կարող ապրել որպէս Հայու Հայրենիք, դա կմեռնի, եթէ չմեռաւ Վ-եանի «բարոյական»ը: Միջոց - Հայրենիքը (ինչպիսի պղծութիւն) կարող է միշտ էլ մնալ օտարի ձեռքը, կբաւէ, որ այդ օտարը աւելի զօրաւոր լինի, քան է Հայը այդ երկրի պատմական տէրը: Ահա՛ թէ ինչու Վ-եանի աշակերտ Սուրէնը գրում է «մեր պայքարը աւելորդ է»: Արդարեւ, ինչու՞ պայքարիլ, երբ ընդունել ենք, թէ Հայրենիքը միջոց է միայն անհատն ապրեցնելու: Պայքարը պահանջում է զոհեր, զոհողութիւններ, իսկ այլասիրաբար, հայրենասիրաբար զոհւում, զոհաբերում է միայն նա, ո՛վ Հայրենիքը համարում է գերագոյն նպատակ, իսկ անհատը՝ միջոց - Հայրենիքն ապրեցնելու համար:

Չերկարեմ այդ մասին, որպէս բարձր սրտի եւ ցեղային բարոյականի տէր՝ դու չես կարող չընդունիլ, որ Ս-ի եւ Վ-ի օրիանտացիան եւ բարոյական ըմբռնումը սահմանուած են սպանելու Դաշնակցութիւնը, որպէս յեղափոխա-մարտական ոյժ, եւ ընդմիշտ թրքօբոլշեւիկի ձեռքը թողնելու մեր Հայ Հայրենիքը:

2. Կարդացի Վ-ի[37] «հրաշագործութեան» մասին Հարաւ[ային] Ամերիկայում: «Մեծ խանդավառութիւն է ստեղծել», «խօսել է ռադիոով», «լուսանկարուել է», «տեսակցութիւն է ունեցած օտար թերթերի խմբագիրների հետ», «օտար թերթերը դրած են մեր ընկերոջ լուսանկարը» եւ նման այլ բաներ: Այս բոլորի արդիւ՞նքը - ոչինչ, բացարձակապէս ոչինչ: Մի հատիկ առողջ գաղափա՞ր է տրուած Հարաւային Ամեր[իկայի] հայութեան, նորահաս սերու՞նդն է կազմակերպուած - ո՛չ: Հնարակեղծ, խաղաղասիրական քարոզներ է տուել: Ասել է «սիրեցէք զմիմեանս», «համերաշխութիւն» է քարոզել: Յետո՞յ: Ի՞նչ է փոխուել: Քաղաքական գործիչի համար շառլատանութիւն է՝ խօսել համերաշխութեան մասին, որին չէ հաւատում: Եթէ քաղաքական խորհողութիւնից զուրկ չէ գործիչը, եթէ շառլատան չէ՝ չի խօսի այնպիսի բաների մասին, որոնց ինքը չէ հաւատում, որոնք չեն կարող իրականանալ: Հակադաշնակցական հայութիւնը շնորհիւ երկու բանի - ա) իր հոգեբանութեան, եւ բ) Մոսկուայի - մեզ չի մօտենայ քաղաքականապէս, չի հաշտուի մեզ հետ: Այդ տարրական ճշմարտութիւնը պէտք է հասկանալ: Իսկ հասկանա-

լով այդ ճշմարտութիւնը՝ ելնել շառլատանաբար կեղծ եւ աժան հաշտութիւն քարոզել, ասել է՝ պահանջել, որ Դաշնակցութիւնը մօտենայ, համերաշխի հակադաշնակցական տարրերի հետ, ասել է՝ աշխատել, որ դաշնակցականը ռամկավարանայ, բոլշեւիկանայ, տկարանայ գաղափարաբանօրէն եւ քաղաքականապէս:

Վի պրոպագանդը՝ իր էութեամբ հակադաշնակցական է: Նա քաղաքական խուժանավարութիւն է, գաղափարախօսական անազնուութիւն, բարոյական քծնութիւն, որով դաշնակցականը մատնում է իր գաղափարային խեղճութիւնը եւ հակառակորդի կեղծ բարեկամութիւնը մուրում, փնտռում: Դա քաղաքական պրոպագանդ չէ, այլ քաղաքական «քաւոր Պետրոսութիւն», որով կարելի է մի հատիկ բան կատարել - այն է տկարացնել եւ զզուելի դարձնել Դաշնակցութիւնը:

- Այդ մարդու բարեկամները, որոնք պատկերամարտիկ կտրած՝ Նժդեհի պատկերի դէմ կպայքարեն, ի՞նչպէս թոյլ տուին, որ իրենց տէրը լուսանկարուի եւ իր լուսանկարը օտար թերթերին տայ:

Շառլատանները ... արժէ՞ աւելին խօսիլ նրանց մասին:

Այս տողերը գրում եմ, որ իրենց տիրոջ արժանի ծառաների «քաւոր Պետրոսներ»ը աւելի լաւ հասկանաս:

Վահանի[38] հետ անպայման տեսնուիր եւ երկարօրէն խօսիր հետը: Առանց նամակս իրեն կարդալու՝ իմ մտքերը, որ քո մտքերն են, յայտնիր իրեն:

Հասկացուր, որ մենք Դաշնակցութեան մէջ սրբութիւն եւ բարձր կրօնականութիւն կդնենք, միւսները Դաշնակցութիւնը դարձրին հասարակ կազմակերպութիւն, որ մեր քարոզած Դաշնակցութեան կը մօտենայ նորահաս սերունդը, իսկ միւսների քարոզածէն՝ կխորշի, կը փախչի:

Վահանին խօսիր Վ-նի՝ Հայրենիքի մասին յայտնած գաղափարի, եւ Սուրէնի նոր օրիենտացիայի մասին: Հասկացուր, թէ սրանք քաջ են ստեղծում, հոգեւոր քաջ Դաշնակցականի գլխում: Թելադրէ Ցեղ[ակրօն] Ուխտերի վարչութեան, որ նրան հրաւիրեն իրենց մի նիստին եւ խնդրեն, որ Վահանն աշխատի «Յուսաբեր»ի միջոցաւ ժողովրդականացնելու Ցեղակրօնութիւնը: Աշխատիր սպառել տալ «Ցեղ եւ Հայրենիք»ը[39]: Հայկի[40] դէմ եղածը ծանօթ խմբակի[41] դաւն է: Շուտով կկարգադրուի խնդիրը: Դաւի մանրամասնութեանց մասին կգրեմ շուտով:

- Այստեղի Գթութեան խաչի շրջ[անային] վարչութիւնը, որի 3 տղամարդ անդամները (2-ը կանայք են) պատժուած են 2-ական տարով - գաղտնաբար գրած են տեղիդ Կ[արմիր] Խաչի կենտ[րոնական] վարչութեան, թէ Նժդեհը ծանր հիւանդ է, չէ կարող մասնակցել Գթ[ութեան] խաչի շրջանային ժողովին - որով՝ կխնդրեն, որ իրենց

ներկայացուցիչ նշանակեն Թափառական առաւ-փախաւին: Թափառականի այդ լրբու[թիւնը] բացուած է եւ գրգռութիւն առաջացրած շրջանում: Տիկ. Սիրանուշին անմիջապէս յայտնիր, որ սրբագրէ եղած սխալը:

Համբոյրներով՝ Նժդեհ

1936 թ. սեպտ. 1

10.

1 նոյեմբեր 1936թ.
Սոֆիա

Սիրելի Օհաննէս,

էլի ծուլացար, չե՛ս գրում: Որպէսզի չմոռանաս, որ ընկերական քաղցր պարտականութիւն ունիս ինձ գրելու պարբերաբար՝ որոշում առ գրելու ինձ երկու ամիսը մի անգամ, եւ տղաներէն մէկին յուշարար նշանակիր, որ մոռացութեանդ դէպքում քեզ յիշեցնէ որոշումդ: Եղա՞ւ: Այս մէկ: Այժմ լսիր երկրորդը: Սիրելիս, ինչպէս երեւում է մեր այս լիրբ աշխարհում միայն Օգանեանը[42] չի փոխուում: Վերջերս, անսպասելիօրէն [Հ.Յ.Դ.] Բիւրօէն մի գրութիւն ստացայ, որով կտեղեկացնեն, թէ Ամերիկայի մեր կ[ենտրոնական] կոմիտէն գրած է իրենց, թէ Նժդեհը մեր Ամերիկայի որոշ ընկերներուն յանձնարարած է [տարածել] «մեր շարքերէն վտարուած» Հայկ Ասատրեանի «Ցեղ եւ Հայրենիք» պարբերաթերթը: Այդ մասին Փարիզէն ինձ գրած էր նաեւ Նաւասարդեանը: Ես երկու օր առաջ գրեցի Ամեր[իկայի] կ[ենտրոնական] կ[ոմիտէ]ին, որ ինքը թիւրիմացութեան մէջ է, որ «Ցեղ եւ Հայրենիք»ը խմբագրում եւ հրատարակում է ոչ թէ Հայկ Ասատրեանը, այլ դաշնակցական Ներսէս Աստուածատրեանը: Հայկ Ասատրեանը աշխատակցող մըն է, եւ ուրիշ ոչինչ: Դաշնակցական մամուլի որոշ օրգանների մէջ ոչ-դաշնակցական աշխատակիցներ միշտ եղել են: Հայկ Ասատրեանի աշխատակցութեան համար պաշտօնական խնդիր յարուցելը արդարացում չունի: Ի՞նչ կարիք կար աղմուկ հանել, երբ կարելի էր գրել ինձ եւ լուսաբանութիւն ուզել:

Գիտեմ, որ եղածը սիրտ պղտորելուց զատ ուրիշ բանի չի ծառայի: Այս ահաւորօրէն ծանր եւ պատասխանատու ժամանակներում մանրուքով զբաղուելը մեղանչում է Ցեղի եւ Հայաստանի դէմ: Ո՞ւմ էին «Ցեղ եւ Հայրենիք»ի տարածման Ամերիկայում, կարող էին գրել Ներսէս Աստրեանին[43], որ չուղարկէ այլեւս: Իմ հիւանդութեան օրերին ինձ խնդրեց Ներսէսը, եւ ես էլ ամառանոցից մի քանի ընկերների մի-մի բացիկով յանձնարարեցի ծանօթ պարբերաթերթը այն

գիտակցութեամբ, թէ նա կծառայէ մեր ցեղակրօն պրոպագանտի գործին: Ինչ որ է, թուրքէն առաջ, այդ հոգեւոր մանրուքը, մանրօրէն թշնամանելու զզուելի տկարութիւնը պիտի սպանեն մեր ժողովուրդը:

Չգրեցիր Վահանի հետ ունեցածդ վերջին տեսակցութեանց մասին: Նորն եկա՞ւ:

Հ[այ] Կ[արմիր] Խաչի կեդր[ոնական] վարչութեան հեռագիրը ժամանակին ստացուեց, սակայն հին վարչութիւնը ժողովատեղիէն փախաւ եւ մի մասնաւոր տան մէջ, Սոֆիայէն դուրս, «շրջանային ժողով» խաղաց: Մանրամասնութեանց մասին տղաները կգրեն քեզ: Գիտցիր, որ Բալկանի[44] թշնամիները յաջողել էին մութի մէջ մոլորեցնել նաեւ Հ[այ] Կ[արմիր] Խաչի կ[ենտրոնական] վարչութիւնը: Աշխատում է դէմոնը: Շրջ[անային] ժողովը, որը տեղի պիտի ունենար (ըստ կանոնագրի) մայիսին, շրջանի պահանջով տեղի ունեցաւ հոկտեմբերին: Թայֆան վճռած էր ձեռքից չտալ ղեկը՝ անպատիժ մնալու նպատակով: Հակադաշնակցական բոլոր կազմակերպութեանց հետ հացի ներքին բարեկամութիւն է մշակած: Այժմ միացած Բարեգործականին՝ կուզեն խաբել Հ[այ] Խաչի կեդր[ոնական] վարչութիւնը եւ քաշել նրանից 650 դոլարը՝ Բարեգործականի կոնտրոլի տակ անցած Գէորգ Մեսրոբի ճեմարանի շրջանի համար:

Բարեւում է Եփիմէն: Համբոյր երեխաներին: Բարեւ Մարիամին: 1936, 1 նոյեմբեր, Սոֆիա:

Համբոյրներով՝ **Նժդեհ**[45]

11.

7 յուն. 1937թ.
Սոֆիա

Սիր[ելի] ընկերներս՝ Օհաննէս, Ասկր[46] եւ Յակոբ,

1. Գիտէք, որ Ցեղակրօնութիւնն էլ ունեցաւ իր ներքին թշնամիները: Հայկական հրէշային նախանձը եւ տգիտութիւնը, որոնք պատճառ դարձան, որ Ցեղակրօնութիւնը հնարաւորութիւն չունենայ դուրս գալու իր ծննդավայրէն՝ Ամերիկայէն եւ տարածելու Հայոց սփիւռքի մէջ: Մեր նորագոյն պատմութեան մէջ ես չգիտեմ աւելի մեծ դաւաճանութիւն՝ կատարուած մեր ցեղի դէմ - քան այն, որ հայկական կոյր նախանձն ու տգիտութիւնը կատարեցին Ցեղակրօն շարժման դէմ:

Այդ շարժման մէջ մէկն իր Հոգեւոր մահը տեսաւ, երկրորդը՝ իր ազդեցութեան տկարացումը Դաշնակցութեան մէջ, երրորդը՝ մեր Ուխտերի մէջ ցեղի խռովքի փոխարէն, մատ ու քուէներ տեսաւ, սարսափե՛ց, ապա սկսեց դաւել նրա գոյութեան եւ ծաւալումի դէմ: Եւ այդ

իսկ պատճառով մեր ստեղծած ջահէլ, ցեղանորոգ եւ փրկարար շարժման ճակատագիրն եղաւ այն, ինչ որ կուզէին թուրքն ու բոլշեւիզմը - մեր ցեղի օրւայ երկու մահացու թշնամիները: Այսօր Ցեղակրօնութիւնը հող գտած կլինէր մեր բոլոր գաղութներում, ամէն գաղութ ստեղծած կլինէր ուխտաւորների իր լեգէօնը, այսօր մեր թիւը հասած կլինէր տասնեակ հազարի, եթէ մեզ յաջողէր ժամանակին զինաթափել ներքին չարութիւնը՝ տգէտ ու նախանձալի:

2. Հայոց սփիւռքի մէջ գոյութիւն ունեցող երիտասարդական կազմակերպութիւնների մէջ կայ միայն մէկը, որ անսխալ կերպող թարգմանում է մեր ցեղի կամքը - լինել ուժե՛ղ, է՛լի ուժեղ, մի՛շտ ուժեղ՝ չկորչելու համար: Ցեղակրօնութիւնը - դա ցեղային ոյժի, հպարտանքի եւ հերոսականութեան կրօն է: Այդ իսկ պատճառով Ցեղակրօն Ուխտերը կձգտեն դառնալ մի ուժաստեղծ գործօն սփիւռքի հայութեան մէջ. նա՛եւ՝ դառնալ միութեան եւ համերաշխութեան մի գիծ, որովհետեւ ոյժը միացուցիչ ազդակ է: Գաղութահայութեան դժբախտութեան, նրա անհամերաշխութեան, նրա ներքին իրերակերութեան պատճառներից մէկն էլ՝ իր ծոցի մէջ գործող կազմակերպութիւնների գաղափարախօսական եւ թւական տկարութիւնն է: Խորապէս ազդելու, պատկառանք, միութիւն, համերաշխութիւն պարտադրելու աստիճան եւ ո՛չ մէկն է բաւականաչափ զօրաւոր: Գոյութիւն ունեցողներից ամենահինը՝ Հոմընդմենը, իրաւ, է՛ ու կմնայ զուտ մարզական մի կազմակերպութիւն, որը երկուսուկէս տասնեակ տարիների ընթացքին չկարողացաւ հասկանալ, որ սպորտը մարմնակրթանք չէ միայն, այլ եւ Հայրենիքի ինքնապաշտպանութեան գործին սատարող մի զօրաւոր ազդակ: Մի նոր սերունդ, վտանգի՛ սերունդ, որը ոչ թէ միայն պաշտէր իր Ցեղը, այլեւ քաղաքականապէս ծառայէր ու մեռնէր իր Հայրենիքի համար:

Հոմընդմենը եղաւ հոգեբանօրէն չէզօք, քաղաքականապէս դիմազուրկ, ու անտարբեր դէպի նոր ժամանակի բարձր պահանջները: Նա իր գործունէութեան մէջ դրեց նպատակի չնչինութիւն, հաստ սրունքներ, իդէազուրկ զբօսասիրութիւն: Սխալ հասկացուած ու կիրարկուած սպորտը տանում է նարցիսիզմի - ինքնասիրահարութեան: Էականը հոմընդմենականի համար - դա սպորտային թատերականութիւնն է, ծափահարելու տենչը, ամբոխից խլած աժան դափնին: Նա չի հասկանում, որ բաւական չէ սիրել սպորտը - սպորտին պէտք է միացնել նա՛եւ սպարտականը, պէտք է զինուոր լինել, Ցեղի եւ Հայրենիքի զինո՛ւոր: Ուրիշ ազգերի մօտ մարզադաշտը հանդիսանում է նախադուռը ռազմադաշտի: Նրանց մօտ մարզարուեստը ծառայում է ռազմարուեստին, որով մարզիկը դառնում է մարտիկ: Այսօր ողջ

աշխարհում - բոլոր պետութեանց մէջ մարզական եւ այլ կարգի դաստիարակութեան խնդիրը դրւում եւ լուծւում է Հայրենիքի եւ Ցեղի պաշտպանութեան խնդրի կապակցութեամբ: Ամէնուրեք սպորտին տրւած է ազգային բնոյթ: Մեզ մօտ միայն փոխառիկ սպորտը ազգային իդէօլօգիա չունի: Եւ հէնց այդ է պատճառը, որ մեզանում սպորտային գրականութիւն, մշակոյթ չէ ստեղծւում: Մեզանում դա կիրարկւում է մեքենաբար: Հայ մարզականին ցայսօր յանցապարտօրէն պակասում է երեք բան - Հայաստանին եւ Հայ Ցեղին սպառնացող Մեծ վտանգի գիտակցութիւնը, Մեծ Նպատակը եւ Մեծ Նւիրումը - Ուխտը:

3. Նորահաս սերունդին վերաբերող ամէն կազմակերպութիւն - անկախ իր քաղաքական դաւանանքէն - եթէ աշխարհ եկած չէ ցեղի անունով - անպէտք է հայրենիքի համար: Նա, որ Ցեղակրօն չէ՝ ոյժի չի՛ վերածւիր: Նա, որ Ցեղակրօն չէ՝ կմնայ առանց մարտական խմորի, կմնայ անմարտունակ - ռազմիկ չի՛ դառնայ: Ռազմիկ, հրաշունչ ու յաղթական ռազմիկ լինելու համար բաւական չէ անգա՛մ դաշնակցական լինելը, քաղաքականապէս անհրաժեշտ է դաշնակցական լինելը, նաեւ պատիւ է դա, բայց մեր դաշնակցական դաւանանքին պէտք է միացնենք ցեղի խռովքը, յաւիտենականի զգացումը, պաշտամունքը՝ կատարեալ մարտիկ դառնալու համար: Դաշնակցութիւնը չէ ունեցած մի հատիկ մարտիկ, որ ցեղակրօն, ցեղաշունչ, ցեղահոգ չլինէր: Անցեղաճանաչ ու անցեղապաշտ կազմակերպութիւնները - մասնաւորապէս նորահասին պատկանողները - հեշտութեամբ դառնում են ներքին չարիք, նրանք դինամիկ նպատակի ու խանդավառիչ գործերի պակասի շնորհիւ դառնում են հոգեւոր ճահիճ, եւ այսպիսով թունաւորում իրենց մատղաշ անդամների միտքն ու զգացումը: Այդ ճահճացած կազմակերպութիւնները՝ իրենց մէջ առնելով ցեղի ջահել զաւակները՝ նրանց կտրում են ցեղի հոգեւոր կաթէն, որով եւ հեշտացնում վերջինների վատասերումը: Նրանք նմանում են այն հոտած ճահիճներին, որոնք առնում են իրենց մէջ գետ ու առուակների վճիտ ջրերը եւ հոտեցնում: Հայօրէն դաստիարակւելու կարօտ ամէն էակ - մանուկ, պատանի, երիտասարդ - կարիք ունի իր յաւիտենական մօր ծծին, իր ցեղին: Արդ, թէ ինչո՞ւ պէտք է ողբալ ճակատագիրն այն բոլոր դժբախտների, որոնք դեռ միացած չեն Ցեղակրօնութեան: Պէտք է ողբալ այն բոլոր կազմակերպութեանց ապագան, որոնց հոգեւոր կեանքը լեցնում են փոքրիկ նպատակը, նոյնքան փոքրիկ գործերը եւ «կրիայի քայլերի» խղճուկ պրոպագանդը: Չէ՛ կարելի ջահել լինել - պատանի ու երիտասարդ լինել - եւ ցեղակրօն չլինել: Հոգեւոր ծերեր են նմանները: Ով ուզում է - սա պէտք է ընդունել որպէս օրէնք - ով ուզում է ոյժի վերածւել

եւ իր ցեղի դիմադրական ոյժն աճեցնել՝ մի տեղ, մի՛ միայն մի տեղ ունի - Ցեղակրօն Ուխտերը:

4. Ներքին թշնամիները - սուտ դաշնակցականը ու պակասաւոր հայը - Ցեղակրօնութեան դէմ կգործածեն վատութեան հետեւեալ զէնքերը՝

ա. «Ցեղակրօնութիւնը յարմար է միայն ամերիկահայութեան պայմաններուն: Այսպէս թութակողները - մտքի անազնւութեամբ տառապողները - կուզեն կեղծել, որ միայն Ամերիկայի մէջ վտանգւած է մեր նորահաս սերունդը, երբ նոյնը հաւասարապէս վտանգւած է մեր բոլոր գաղութներում՝ Թավրիզէն մինչեւ Փարիզ, Սուրիայէն մինչեւ Բալկանները: Ամէնուրեք հայ մանկտին ու պատանեկութիւնը՝ ցեղօրէն անհնքնաճանաչ տառապում է ստորադասութեան, անլիարժէքութեան, նուաստութեան գիտակցութեամբ:

բ. «Ցեղակրօն Ուխտերը Դաշնակցական պատուաստը չեն ընդունած»: Այդ զրպարտութեան հեղինակները հանդիսացան նա՛խ տեղիդ մէկ երկու դատարկապորտ կիսամտաւորականները, որոնք ուզեցին [Հ.Յ.Դ.] Բիւրօն եւ արտասահմանի մեր մարմինները նախապաշարել:

գ. «Դաշնակցութիւնը ուխտ մըն է ինքնին եւ պէտք չունի յաւելւածական ներարկումներու»: Այստեղ այլեւս ամենատգիտականութիւնը չէ, որ հաչում է Ցեղակրօնութեան դէմ, այլ պօլսաշունչ, լըվանքէն կիսամտաւորականը, որի սուտ սոցիալիստութիւնը դէմ է Ցեղին, Ցեղակրօնութեան: Անցեղաճանաչը պակասաւոր դաշնակցական է, անկախ իր տարիքէն: Բացի այդ՝ ցեղը մարդկային նորահաս սերունդի համար, համաշխարհային պատերազմէն յետոյ, ստացած է հոգեբանական զօրաւոր գրաւչութիւն, դա դարձած է մի փրկարար idée force - «գաղափար զօրութիւն»:

դ. «Կարելի է - չարաբանում են ներքին թշնամիները - առանց ցեղակրօն անուան էլ նորահաս սերունդը ցեղապաշտ դարձնել»: Այդ պնդումի մէջ եւ՛ շառլատանութիւն եւ՛ վատութիւն կայ: Դա ասել է՝ մէկին կարելի է քրիստոնեայ դարձնել առանց Քրիստոսի եւ քրիստոնէութեան: Սրանք էապէս անուան դէմ չեն միայն, այլ՝ ցեղի, Ցեղակրօնութեան: Յաջողեցա՞ն այսօր անունը փոխել տալ, վաղը այլեւս վրան բաց կերպով կհալածեն մեր դաւանանքն ու նորահաս տարիքը:

զ. Արտասահմանի ուխտերը, հեռաւորութեան պատճառով, չեն կարող ղեկավարւել [Հ.Յ.Դ.] Ամերիկայի կ[ենտրոնական] վարչութեան կողմից: Սնանկ է եւ այս միտքը:

Հապա Պարսկաստանի, Սուրիոյ, Եւրոպայի եւ Բալկանների «Գթութեան խաչերը» ինչպէս են ղեկավարւում Ամերիկայի կենտր[ոնական] վարչութեան կողմից:

է. «Ուխտերն աւելի Նժդեհին են կապուած, քան Դաշնակցութեան» - այդ պրովակասիոնի հեղինակներին դուք ճանաչում էք տեղիդ վրայ, որոնք մեր շարժման դէմ դաւել սկսեցին նրա գոյութեան հենց առաջին օրերից: Վերջերս գրեցի տեղիդ կենտ[րոնական] կոմիտէին որ գործածութիւնից հանէ իմ պատկերը կրող դրոշմանիշը: Գուցէ այսպիսով բաւարարուեն հայկական նախանձն ու փոքրոգութիւնը եւ դադարեն դաւել Ցեղակրօն շարժման դէմ:

Չերկարեմ: Մատնանշածներէս աւելի՛ են հակացեղակրօն չարութեան զէնքերը: Նկատի առնելով այդ ամէնը, դուք, որպէս ուխտերի ղեկավարներ, ձեր սրբազան պարտականութիւնը պէտք է համարէք՝

1) Պատգամաւորական ժողովների մէջ ամենայն վճռականութեամբ [դատապարտել] Ցեղակրօնութեան դէմ դաւող բոլոր չկամութիւնները: 2) Ատամներով պաշտպանել ցեղակրօն անունն ու դաւանանքը: 3) Ազգանքի ու զայրոյթի բանաձեւ քուէարկել տալ Բուքրէշում լոյս տեսնող հոսոսաշունչ «Արազ» թերթուկի հակացեղակրօն ելոյթի դէմ: 4) Աշխատել, որ H.[ayrenik] Weekly-ն պրոպագանդ տանի Ցեղի-Ցեղակրօնութեան գաղափարների համար: 5) Խնդրել «Հայրենիք» օրաթերթի խմբագիրներին, որ տեղ չտան ծպտուած հակացեղակրօնների գրուածքներին (վերջերս «Հայրենիք» օրաթերթի մէջ լոյս տեսաւ Արմէն կոչուած (Յով[հաննէս] Դեվէճեան՝ քշուած Բալկանէն, եւ այժմ Բուքրէշում միացած Սիրունի[47]-Սարունի[48] հակացեղակրօն թայֆային) գրչի շառլատանի մի գրութիւնը Ցեղի մասին, որը էապէս ուղղուած է Ցեղակրօնութեան դէմ):

6) Ուխտերը մղել զբաղուելու առաւելապէս օդաչուական սպորտով, պարաշուտիզմով:

7) Շարունակել - մեծ թափով - նորահաս սերունդի զօրահաւաքը Ցեղակրօնութեան դրօշի տակ:

Համբուրելով ձեզ՝ յաջողութիւն կմաղթեմ ձեզ:

Նժդեհ

1937, 7 յուն. Սոֆիա

12.

6 ապրիլ 1937թ.
Բուքրէշ

Սիր[ելի] Օհաննէս,

Գեւորգի նամակից իմացայ, որ դեռ չես ստացած քեզ գրածս նամակը: Այժմ ստացած կլինես: Յուսով եմ, որ <u>քեզ յատուկ վճռականութեամբ կգործադրես գրածներս:</u> Մեր կուսակցութեան բարձունքներում աւելի ապականութիւն կայ, քան տեսնում ենք: Միայն վերջին 5-6

ամիսների ընթացքում տեղի ունեցած հոգեւոր այլանդակութիւնները կբաւեն զգուանքով ու զայրոյթով լեցնելու ամէնէն հաւատաւոր ու մեղմ դաշնակցականին: Վահան Փափազեան - նախկին Բիւրօի անդամ - «Վէմ»ի մէջ լոյս ընծայեց իր յուշերը Տարօնի մասին: Իր յուշերի մէջ այդ մարդը Ռուբէն Տէր Մինասեանին դուրս է բերել իբրեւ ժողովրդասպան: Միեւնոյն «Վէմ»ի մէջ Ս. Վրացեանը բարոյապէս սպանում է Ռուբէնին - Տարօն աշխարհի ղեկավարութեան բացարձակ անկարողութեամբ: Սրանով չբաւականացան: Ռուբէնի մի գրքոյկի առթիւ՝ Վրացեանը իր ամսագրի մէջ մի կրքոտ յարձակումով բարոյապէս տրորում է Ռուբէնին՝ վերջինիս անւանելով հիմնական ձեւակերպուած մտքերից զուրկ, հակագիտական, «վիճելի, տարօրինակ», բոլշեւիզմն արդարացնող, «քաջազնունի» եւ այլն եւ այլն: Թոյն ու թշնամանք - ահա՛ թէ ինչով է թաթախուած Վրացեանի գրախօսականը: Վրացեանը գիտէ, որ Ռուբէնը Բիւրօի անդամ է, որ նման հրապարակային ելոյթներով նա մատնում է Բիւրօի եւ իր միջեւ գոյութիւն ունեցող թայֆայական կռիւը, որ դրանով շարքերը գրգռում է Բիւրօի դէմ եւ զէնք է տալիս հակադաշնակցական տարրերի ձեռքը՝ Դաշնակցութիւնը հարուածելու համար:

Թշնամութիւնը այնքան զօրաւոր է այդ մարդկանց միջեւ, որ դժուարանում են զսպել իրենց ախտաւոր կիրքը, եւ մատնում են, թէ Դաշնակցութիւնը ղեկավարութիւն չունի, թէ ղեկավարները իրար են կրծում եւ այլն: Եւ այդ այն ժամանակ, երբ քեմալական Թուրքիոյ մէջ նոր օրէնքով, 16-ից մինչեւ 64 տարեկանը, երկսեռ, յայտարարուած է զինուոր, երբ Թուրքիան ձի է նստել աշխարհի այս խռով օրերին:

Ինտրիգանը անկախ իր տարիքից եւ կարողութիւններից, չէ կարող ղեկավար լինել թայֆա ստեղծողը, եւ թայֆայի քուէներով իւր ընտրութիւնը ապահովելու ձգտողը չէ կարող մնալ կուսակցական ղեկավարութեան մէջ: Եթէ 15 տարի հաց ու հանգիստ փնտռողը եւ ամէն ընդհանուր ժողովի նախօրեակին արհեստական կերպով շրջաններ խառնշտկողը չէ կարող Բիւրօի անդամ լինել: Այդ դաւամտութեամբ հիւանդ մարդիկ պիտի հասկանան, որ չէ կարելի շարքերը նախիր համարել եւ մութ մեքենայութիւններով կուսակցութեան ղեկը իրենց ձեռքին պահել: Ով պատրաստ չէ, ով հաղորդուած չէ՝ ամէն վայրկեան մեռնելու Հայաստանի համար, պէտք է համարուի կենդանի դիակ՝ մեռեա՛լ Դաշնակցութեան եւ Հայութեան համար: Այդ դաւադիրները, այդ կենդանի մեռեալների օձաթոյն նախանձը պատճառ դարձաւ, որ Ցեղակրօնութիւնը մնայ միայն Ամերիկահայութեան սեփականութիւնը, որ ցայսօր անկազմակերպ մնայ գաղթաշխարհի նորահաս սերունդը:

Թուրքն ու բոլշեւիկը կուզէին մեզ տեսնել այս անկեալ վիճակի մէջ, իսկ այդ անկեալ վիճակում է հայութիւնը մեր դաւադիրների քաղաքական դատարկապորտութեան շնորհիւ: Գիտցիր, որ Վրացեանը վրան բաց կերպով կռիւ է յայտարարել օրւայ Բիւրօին: Ռուբէնը ինչ-ինչ հաշիւներով հրաժարւում է ընդունել Վրացեանի մարտահրաւէրը: Վրացեանի կատարածը մի ռազմախաղ է: Նա ճգնում է ամէն գնով, ընդհ[անուր] ժողովում փրկել իր Բոստոնի ծանօթ 3 դաւադիրներին, որոնց դաւաճանութեան երեսէն Ամերիկայի մեր կազմակերպութիւնը մատնուեց անհաշիւ մեռեալ ծախքերի եւ դեռ երկար ժամանակ պիտի աշխատի քաւել 3 սրիկաների մեղքը: Մօտենում է ընդհ[անուր] ժողովը եւ ներքին վատութիւնները ակտիւացած են:

Մութի մէջ գործի են դրւած բոլոր ժանգոտ զէնքերը - կաշառում, խոստում, սպառնալիք եւ այլն: Այս ճամբով են ուզում շէֆութիւն ձեռք բերել նրանք, որոնք հայոց նորագոյն պատմութեան ամենավտանգալից եւ նեղ օրերին՝ տմարդօրէն լքած են ժողովուրդը: Այդ մեռնել չգիտցողներն են այսօր կռւադաշտի վերածել մեր ներքին կեանքը: Ամէն գնով ընտրուել՝ահա՛ սրանց կեանքի միակ նպատակը: Իսկ ընտրելուց յետոյ՝ ամէն գնով արգիլել գործելու, ստեղծագործելու, մեռնելու տրամադիր մարդկանց - ահա՛ եւ սրանց միակ գործը: Վրացեանը վերադարձաւ Հարաւ[ային] Ամերիկայէն եւ անմիջապէս այդտեղ ուղարկեց մութ անցեալի տէր Աշոտ Արծրունուն[49]: Այդ լակոտը գնացել էր Երկիր, եւ երբ վերադարձաւ, այլեւս կասկածներ կային, որ կարմիրների հետ կապ ունի: Ընդհ[անուր] ժողովը սրան ներս չառեց: Վրացեանը տէր կանգնեց (սրա տակտիկան է՝ տէր կանգնել բոլոր տեսակի վատերին եւ օգտագործել նրանց ընկածութիւնը) սրան եւ շահագործեց:

Մի ուրիշին կաշառով անբարոյականացնելէ յետոյ այժմ ուղարկում են Սուրիա, Պարսկաստան: Վերջին տարիները կաշառը դարձրել են զօրաւոր միջոց՝ նիւթապէս ու հոգեպէս աղքատ ընկերներ որսալու: Մարդկանց կաշառում եւ ուղարկում են իրենց թայֆայի համար պրոպագանդ, իսկ իրենց հակառակորդների դէմ բամբասանք անելու: Դա է օրւայ «յեղափոխական» ու «մարտական» գործը: Մենք ասում ենք՝ երբ մեռնելու տրամադիր մարդիկ կան, կարելի է յեղափոխական գործ անել: Նրանք զգացնել են տալիս, թէ իբր աշխարհում անբարոյականութիւն, իսկ իրենց գրպանում դրամ կայ՝ կարելի է Բիւրօի անդամ ընտրուել եւ ոչինչ չանել: Չերկարեմ այդ մասին: Է՛լի կրկնում եմ՝

ա. Ատամներով պաշտպանել Ցեղակրօն անունը: Անունը փոխելով՝ դաւադիրներն ուզում են սրտից զարկել Ցեղակրօն շարժումը:

բ. Պատգամաւորական ժողովում ցաւ յայտնել Բիւրօին, որ չօգտուեց Ցեղակրօն շարժումէն եւ չաշխատեց զայն դարձնելու համագաղութային:

գ. Զայրոյթ յայտնել «դաշնակցական» այն վրացեանական թերթերին, որոնք դէմ արտայայտուեցան Ցեղակրօն շարժման («Արազ», «Յառաջ»):

դ. Պահանջել ընդհ[անուր] ժողովէն, որ համագաղութայնացնէ Ցեղակրօն շարժումը:

ե. 3-ի կողմից Ամերիկայում նիւթւած դաւը հնարաւոր դարձնող Վրացեանի նամակը, խարդախւած պատգամաւորական ժողովը եւ Սաչաքլեանին հեռացնելը դարձնել խնդրի առարկայ ընդհ[անուր] ժողովում եւ պահանջել դաւադիրների արտաքսումը Դաշնակցութիւնից:

Միայն, միմիայն այս ճամբով կարելի պիտի լինի փրկել Դաշնակցութիւնը իր դէմ գործող եւ զինքը շահագործող մաֆիայից եւ զայն ծառայեցնել Հայաստանին:

Եթէ չընէք այդ՝ մեղանչած պիտի լինէք թէ՛ Դաշնակցութեան եւ թէ՛ Հայաստանի դէմ: Հաւատում եմ, որ կընէք: Գտնւում եմ Բուքրէշում: Սպասում եմ վիզայի՝ մեկնելու Եգիպտոս: Ի՞նչ է անում Կոպերնիկը: Նրան էլ գրած եմ: Դաշնակցութեան մէջ բաւական չէ արդար եւ ուղղափառ լինելը: Պէտք է նաեւ ճակա՛տ ունենալ, այլապէս դաւադիր հացապաշտները իրենց հանգիստն ապահովելու համար արդարի դիակի վրայով կանցնին:

Ընկ. Սարգիս Արարատեանի մօտ եմ: Կապւէք սրա հետ: Է՛ր, է՛ եւ կմնայ մեր ամենապատրաստւած մտաւորականը: Անփոխարինելի է որպէս քաղաք[ական] գործի մարդ: Պիտի ուզէի, որ նրան հրաւիրէիք Ամերիկայ: Գրիր, կապւիր նրա հետ: Ահա հասցէն.

Mr. S. Araradian, str. Stf. Mihaileanu N. 21, Bucaresti, Romania.

Բարեւիր Գաբրիէլին եւ բոլոր ընկերներին:

Համբոյրներով՝ **Նժդեհ**

1937, 6 ապր[իլ], Բուքրէշ

13.

21 ապրիլի 1937թ.
Խստօրէն անձնական է

Սիր[ելի] Օհաննես,

Երկու օրէն կմեկնիմ Եգիպտոս՝ [Հ.Յ.Դ.] Բիւրօի հետ տեսակցելու: Զգւանքս ու զայրոյթս չափ ու սահման չունի: Հոգեւոր մանրուքին - մանրօրէն դաւելու, թշնամանելու, նախանձելու ախտէն պիտի մեռնի մեր հին սերունդի այն տարրը, որը հացէն ու նախանձէն զատ ուրիշ բան չը ճանաչեց իր անպտուղ կեանքում: Այդ չարագործ տարրի շնորհիւ Դաշնակցութիւնը դատապարտւած է քաղաքական դատար-

կապորտութեան: Այդ տարրը անշնչելի է դարձրել կուսակցական մթնոլորտը, թունաւորել: Ասատուր կոչուած ինտրիգանին Բուլղարիա ուղարկելը կմնայ ամենամեծ վատութիւնը:

Բուլղարիոյ Գթութեան խաչի պատգամաւորները տարիներով եղած են դոքտ. Բարսեղեանը եւ Սեպուհը, եւ սպասելի էր, եւ տարրական շիտակութիւնը կպահանջէր Բուլղարիա ուղարկել Արմենակին կամ Սեպուհին:

(Եթէ կարիք կար մարդ ուղարկելու, եւ ոչ թէ Ասատուրին, որը տարիներով դաւած է իմ եւ Բուլղարիոյ դէմ: Ցաւում եմ, որ տիկին Տեստիգիւլը գիտակցօրէն մոլորանքի մատնեց ինձ: Չէի սպասում: Միթէ նա չգիտէ, թէ ինչ դաւեր կային, կան իմ եւ Բալկանի դէմ: Միթէ չգիտէ, որ Ամերիկայում եղածս ժամանակ, Կ[արմիր] Խաչի պատգամ-[աւորական] ժողովներում, իրեն պաշտպանած լինելուս համար ծանօթ խմբակին (Ասատուր, Օզան[50], Համօ) մեծապէս գրգռած էի իմ անձի դէմ: Ինչպէս կարելի էր Գթ[թութեան] խաչի խնդրի քննութիւնը թողնել Ասատուր կոչուածին, երբ տիկին Դեստիգիւլը եւ դուք բոլորդ գիտէք, որ Ասատուրը մութ հաշիւներով է ուղարկւում Բուլղարիա: Երկու ամիս է, ինչ այստեղ է եւ Գթութեան խաչի անունն իսկ բերանը չէ առել: Նա սպասում է, որ ես մեկնիմ, հեռանամ Բուլղարիայէն, որ իր ուզածի պէս թիւէ ու հաղորդագրէ: Տիկին Դեստիգիւլը ինչու՞ գրեց ու հեռագրեց, թէ ես եմ իրենց լիազօրը,- նրա համար, որ երկու օր յետոյ չեղեա՞լ յայտարարէին այդ լիազօրութիւնը: Այդ սպասելի չէր տիկին Սիրանուշէն: Ինչ որ է, չեմ զարմանում, որովհետեւ վաղուց եմ համոզւել, թէ գաղութ կոչուած դժոխքում սուրբն ու սրիկան, ռազմիկն ու սրիկան միեւնոյն արժէքն ունեն: Եւ այդ հայութիւնը հայրենիք կուզէ !?...

[Հ.Յ.Դ.] Ամերիկայի կ[ենտրոնական] կոմիտէն էլ չուզեց չէզոք մնալ, չխառնւել Բալկանի խնդիրներին: «Ցեղ եւ Հայրենիք»ի դէմ պաշտօնական խնդիր յարուցողը եղաւ տեղիդ կ[ենդրոնական] կոմիտէն: Նոյնը Բիւրօին պաշտօնապէս հաղորդագրած է նաեւ այն մասին, թէ Նժդեհը յանձնարարած է «Ցեղ եւ Հայրենիք»ը:

Ես գիտէի, որ Օզան կոչուածը իժաբար պիտի խայթէ ինձ: Ծանօթ ինտրիգանի այդ սատակ գործակալը վրէժ է լուծում: Ինձ գրած են, թէ Ամերիկայում եղածս ժամանակ ես աշխատած եմ գոյութիւն ունեցող կողմերէն մէկի համար - ձեր կողմի համար: Այդ «համոզումն» է կայացրած Ամերիկան այցելողները: Ծանօթ խմբակը այսպէս է «լուսաբանել» լիազօրներին եւ գործիչներին: Ես գիտէի, թէ իմ ազդեցութիւնը տկարացնելու համար՝ պիտի դաւեն Ցեղակրօնութեան դէմ: Անունի խնդիր չէ: Ոչ թէ անունին դէմ են, այլ ոգուն, գաղափարին, նորին, նոր սերունդին: Կռիւը Ամերիկայի համար է: Իմ դէմ կդաւեն՝

Ցեղ տկարացնելու, ինչպէս Ցեղ կզարկեն՝ ինձ տկարացնելու: Կոպերնիկին «զարկեցին» Ամերիկայի մէջ, կփորձեն ինձ զարկել Բալկանի մէջ: Հին տակտիկա է: Գործ պահանջողը ուղղափառ չէ, իսկ գործ անողը՝ նա՛եւ վտանգաւոր է: Մենք գործ ուզեցինք, եւ գործ արինք - եւ սուտ դաշնակցականների թշնամութիւնն ու թոյնը գրգռեցինք: Յիշու՞մ ես Վրացեանի նամակը գրուած Արսէն Միքայէլեանին Ձեր պատգամաւորական ժողովի նախօրեակին: Այդ նամակի մասին խօսեց Արսէնը Օզանի տանը, իմ եւ Սաչաքլեանի ներկայութեան: Այդ նամակով Վ-ը կոնկրետ թելադրութիւններ կընէր, թէ որոնց պիտի քաշել կենտր[ոնական] կոմիտէի մէջ: Այդ նամակի հիման վրայ խարդախուեց ծանօթ պատգամաւորական ժողովը, որի օրինականութեան դէմ ժամանակին բողոքեցին դոքտորը՝ Կայծակը եւ մի շարք ընկերներ մասնաւոր կարծիքներ արձանագրել տին: Այդ ապօրէն ժողովին, Վրացեանի հրահանգով պէտք է ընտրէր ծանօթ կենտ[րոնական] կոմիտէն: Ծանօթ դաւադիրների մեքենայութեանց շնորհիւ գործավարութիւնէն պիտի հեռացէր Սաչաքլեանը, որպէսզի մնացածները կատարեն այն տեղիդ մեր կազմակերպութեան (եւ ողջ Դաշնակցութեան) գլխին, ինչ որ կատարեցին: Թէ ինչո՞ւ տեղի ունեցաւ պրովոկացիան եւ թէ ո՞րի դէմ էր ուղղուած դա, այդ մասին ժամանակին խօսած էք ինձ: Պէտք էր վտանգել Նժդեհի գործը, Նժդեհին - ահա՛ թէ ինչո՞ւ տեղի ունեցաւ դաւը, եւ սատանայաբար վերագրուեց Նժդեհին:

Գիտէք, թէ Քրմոն[51] ինչ լուրեր կտարածէր: Չերկարեմ այդ մասին: Ամերիկայի մեր կազմակերպութեան - ինչպէս Բալկանի - դժբախտութեան պատճառ դարձաւ Վր[ացյա]նի մութ նամակը: Այդ նամակէն կսկսի մեր եւ ձեր դժբախտութեան այբուբենը: Այդ նամակի զոհերն են մեր 9 ընկերները: Այդ նամակը խառնշտկեց գաղթաշխարհը՝ առիթ տուեց հակադաշն[ակցական] տար[ր]երին մեզ ամբողջապէս զբաղեցնելու ներքին ճակատի վրայ: Այդ նամակի պատճառած ծախքերը կմնան անարդարանալի: Ծախսւած գումարներով կարելի պիտի լինէր գլուխ հանելու մեր երկրի ինքնապաշտպանութեան մի մասը, նրանով կարելի պիտի լինէր հսկայական հակաթիւրք գործ կատարել:[1]

Մօտենում է ընդհ[հանուր] ժողովը: Ասատուրին Բիւրօի լիազօր դարձնելը նշան է, որ ընդհ[անուր] ժողովում նա ոչ թէ կպատժւի իր նիւթած անօրինակ դաւի համար, այլ կվարձատրւի: Եթէ այդ վատու-

[1] Այս էջի լուսանցքներին Գ. Նժդեհը յաւելել է. «Գրեցի Ամերիկայի կ[ենտրոնական] կոմիտէին, որ վերջ տրւի Ուխտերի կողմից գործածւող իմ պատկերը կրող դրոշմանիշին: Պահանջեցի նոյնպէս, որ իմ անունը վերցուի չգիտեմ թէ որտեղի ակումբի վրայէն»):

թիւնը Ասատուրներին եւ նրանց դաւերի մղող վարժապետին[52] ներեց Ամերիկան՝ նա անուղղակի կերպով ներած կլինի թուրքերին: Չգիտեմ, թէ ովքեր են լինելու ձեր պատգամաւորները, բայց գիտեմ, որ դաւի հեղինակները ամէն ինչ պիտի անեն, որ ձեզանից մի հատիկ մարդ չերեւայ ընդհ[անուր] ժողովում: Կմնայ, որ դուք կանչէք Կոպերնիկին եւ ամէն գնով նրան ուղարկէք ընդհ[անուր] ժողովին:

Կոպերնիկը լա՛ւ պիտի հասկանայ, որ եթէ ինքը ներկայ չլինի, եւ երեւան չգայ դատապարտողի դերում՝ անաստուածօրէն պիտի սեւացնեն իրեն: Ձեր կ[ենտրոնական] կոմիտէն կարող է լինել, որ ուղարկեն դոքտ. Դաշչեանին: Իմ հանդէպ բարեացակամ չէ այդ մարդը: Թէ ինչպէս է տրամադրուած դէպի դաւադիրները եւ դէպի ձեզ՝ չգիտեմ: Գուցէ եւ յարմար համարէք ձեր բողոքը ընդհ[անուր] ժողովին յղել սրա միջոցաւ, եթէ Կոպերը[53] կարելիութիւն չունեցաւ գնալ, կամ չուզեց գնալ: Լսի՛ր, եւ մի մոռանար, սիր[ելի] Օհաննէս, մի ժողովուրդ, որը չգիտէ իր ներքին սրիկաները պատժել՝ չպիտի կարողանայ պատժել իր գոյութեան արտաքին թշնամիներին:

Ինչպէս ասացի՝ երկու օրէն կմեկնիմ Եգիպտոս: Դաւադիրներին յաջողեց ոչ թէ անպատիժ կերպով դաւել մեր դէմ, այլեւ՝ Բիւրօին հանել, լարել իր բարեկամների դէմ: Այսպէս է գործում դաւամտութեան սատանան: Եւ յաջողում է դաւադրողը, երբ շրջապատը քուն է մտած: Եթէ ժամանակին Վ-ի նամակը խնդրոյ առարկայ դարձնէր Բիւրօի լիազօրը (Կոպերնիկը)՝ այսօր ինքը, մենք եւ կուսակցութիւնը այդ վիճակի մէջ չէր լինի:

Բիւրօի հետ տեսակցելէս յետոյ վճռած եմ օպերացիայի ենթարկել լեարդս եւ լեղուցքս: Բժիշկները խորհուրդ են տալիս առայժմ խուսափիլ օպերացիայէն, որովհետեւ կարիք ունիմ բարդ օպերացիայի: Լեղուցքս եւ 12-մատնեայ աղիքս միացել են իրար: Պէտք է աշխատել, որ այդ երկուսը զատուեն իրարից, եւ յետոյ կատարել օպերացիան: Իսկ սրա համար պէտք 2-3 ամիս մնալ Վիշի (Ֆրանսա) եւ օգտուել հանքային ջրերից: Նիւթ[ական] միջոցներ չունիմ: Ուղարկում եմ քեզ «Իմ պատասխանը կամ Հայաստանի ողբերգութիւնը թրքօ-բոլշեւիկ փաստաթուղթերի լոյսի տակ» գիրքը:

Բարի եղիր, խնդրում եմ, տղաներիդ միջոցաւ (ինչպէս եւ մօտիկ ընկերուհիների՝ Սինայի, Նուարդի, Սիրունեանի եւ այլոց) սպառել տալ եւ փոխարժէքը մաս առ մաս հասցնել ինձ: Արտասահմանի հասցէս կգրեմ Եգիպտոսից: Քեզ ուղարկածս գրքերը սպառել տուր Ուստրի, Ուոթրթաունի, Ուայնթինսվիլի մէջ: Աճապարիր, որ չհարկադրուեմ վերադառնալ առանց բժշկուելու: Գինն է $ 1:

Նամակս ուրիշների ձեռքը չտաս: Նախազգուշացուր Կ.[արմիր] Խաչ վարչութեան մօտիկ ընկերուհիներիդ, որ աշխատեն գործիք չդառնալ դաւադիրների ձեռքում:

Սիրով եւ եղբայրօրէն՝ Նժդեհ

1937, 21 ապրիլի, Սոֆիա

Նամակները գրիր Սոֆիայի հասցէիս, տիկինս կուղարկէ ինձ:

Նոյնը[54]

14.

[1937թ.]

Սիր.[ելի] Օհաննէս,

Գրում եմ Սոֆիայէն: Վերադառնալով՝ սեղանիս վրայ գտայ Ռուբէն Դարբինեանի[55] նամակը, որով երկտող կուզէ «Հ»-ի[56] համար: Ուղարկեցի Կոստանեանների հասցէին, որ տանին անձամբ յանձնելու Դարբինեանին: Այդ միեւնոյն նամակի մէջ Դարբինեանը հարցնում է՝ արդեօք հաւատ ունի՞ս անգամ մը եւս Ամերիկա գալու: Թերեւս այս անգամ կընես պէտք եղած գործողութիւնը: Գրէ տրամադրութիւնդ: Չգիտեմ, թէ ընկ[եր] Դարբինեանը որի կողմից է թելադրուած ինձ գրելու այդ մասին: Ես նրան խոստացայ մի քանի օրէն գրել՝ «այո՛» կամ «ոչ»:

Պիտի ուզէի, որ դու շօշափէիր ձեր կ[ենտրոնական] կ[ոմիտէ]ի տրամադրութիւնները եւ անմիջապէս ինձ գրէիր: Այո՛, կուգամ, եթէ գիտենամ, որ կգործակցիմ մի բարեացակամ կ[ենտրոնական] կ[ոմիտե]ի: Ցեղակրօն շարժումը խորացնելու եւ զայն համագաղութային դարձնելու համար կուգամ թէկուզ համոզուած լինեմ, որ առողջութեանս մնացորդն էլ այս անգամ վրայ կուտամ:

Սիրելիս, Եգիպտոս այցելելէս յետոյ խորապէս համոզուեցի, որ Դաշնակցութիւնն անգլուխ է, անղեկավար, քաղաքականապէս անգործ: Չորս-հինգ հոգի, ամբողջ 15 տարի իրենց հացին ու հանգստին կծառայեցնեն մեր կուսակցութիւնը: Ամբողջ տասնամեակներ սպանեցին՝ սպանելով մեր ժողովրդի քաղաքական կամքը: Սիրտ եւ կարողութիւն չունեն տասը սէնթի գործ կատարելու, բայց հազար ու մի մեքենայութեանց կդիմեն ընտրելու եւ վերընտրելու Բիւրօի անդամ:

Ռուբէն Տէր Մինասեան կոչւածը, որը Սասունի ու Տարօնի ժողովուրդը կրակների մէջ թողնել-փախչելէն յետոյ խղճի խայթից մղուած ատրճանակը ճակտին պիտի դնէր՝ (նոյնը, եթէ տղամարդ լինէր, եւ ոչ թէ երկչոտ ինտրիգան, պիտի կատարէր Ղարսն առանց գնդակի թուրք

չետաներին յանձնելուց յետոյ) ողջ 20 տարի Բիւրօ կխաղցնէ, ղեկավարութիւն կկեղծէ եւ իր վճարովի անգործութեամբ կդաւէ ու կդաւէ այն բոլորի եւ այն բոլոր փրկարար շարժումների, նախաձեռնութեանց դէմ, որոնք հայ ժողովրդի ճակատագրով ապրողները կփորձեն մեր ապագան մասամբ ապահով դարձնելու միակ նպատակով: Այդ դաւադիրը՝ Ցեղակրօն շարժումը տապալելու, նրա առջեւ խոչընդոտներ հանելու, ինձ եւ իմ գործը վտանգելու դիւային հաշիւներով Խդրեան կոչւած մի հասարակ սրիկայի միջոցաւ կազմակերպեց Ամերիկայի քեզ ծանօթ դէպքը եւ հարիւր հազարների հասնող մեռեալ ծախքերի դուռ բացեց մեր կուսակցութեան առջեւ: Այդ հրէշի շնագայլային չարութիւնը դեռ գործի վրայ է: Նա իր վերընտրութիւնը (պատժելու մասին Խդրեանի հետ բնաւ չեն մտածում) ապահովելու համար արդէն պառակտած է Բալկանը, Սուրիան եւ Պարսկաստանը: Քանի դեռ դա մեր կուսակցական ղեկավարութեան մէջ է, Հայաստանի ինքնապաշտպանութեան համար ոչինչ կարելի է կատարել: Ինքն անկարող ու երկչոտ՝ նա դէմ է եւ թշնամանում է, խանգարում այն բոլորին, որոնք կուզեն բան կատարել Հայ Հայրենիքի համար:

Ամերիկայում տեղի ունեցած անիմաստ եւ տնաքանդ դէպքի համար ընդունայն ծախսւած հարիւր հազար դոլարներով կարելի էր Հայաստանի ինքնապաշտպանութիւնը կազմակերպել, կարելի էր տասնեակներով աշխարհադղորդ հակաթուրք գործեր կատարել: Հրէշը իր կաշին եւ ոսկորը բոլշեւիկէն եւ թուրքէն փրկած իր ընկերոջ կեանքի եւ գործի դէմ դաւելու համար էապէս ծառայեց թուրքին եւ բոլշեւիկին: Ով շահագործում է Հայաստան եւ Դաշնակցութիւն անունները, բայց ոչինչ չէ անում նրանց հզօրացման համար, նա զինակիցն է թուրքի եւ բոլշեւիկի: Ամբողջ 20 տարի նախարարական ամսական ստանալ, եւ այդ լրբութիւնը միայն եւ միմիայն Հայաստանի եւ ճշմարիտ դաշնակցականութեան համար աշխատողների դէմ դաւեր նիւթելու համար: Ես հայոց պատմութեան մէջ չգիտեմ աւելի մեծ դաւաճանութիւն, քան այդ: Ընդունի՛ր եւ հասկացո՛ւր ընկերներիդ, որ ամէն հանդէս՝ զօրահանդէս չէ՛, որ տարին հանդէսներով ու խօսքով լեցնել՝ չի նշանակում ծառայել Հայաստանին: Վե՛րջ, վե՛րջ պէտք է դրւի ժամանակասպանութեան, որ ասել է՝ ժողովրդասպանութիւն, հայրենաքանդութիւն: Տէր Մինասեանի համար գոյութիւն չունի գաղափարաշունչն ու սրիկան, հացի կամ գաղափարի ծառայողը, եօթվերք զինւորը կամ դաշնակցութիւն խաղացող Խդրեանը, այլ անոնք, որ դէմ են Ամերիկայում տեղի ունեցած սեւ դէպքին եւ անոնք, որ կարդարացնեն եղածը 100.000 դոլարների վատնումով:

Այսօր մէկն այնքան լաւ դաշնակցական է, որքան Տէր Մինասեանի հետ է ծանօթ խնդրում: Իսկ անոնք, որոնք հարիւր հազարների գնով մի սեւ կատու սատկեցնելը համարում են յեղափոխական սկանդալ՝ համարւում են հակառակորդներ, որոնց դէմ Տէր Մինասեանը իրեն ազատ է համարում դաւել թրքաբար: Ընդունելով, որ ընդի[անուր] ժողովում ես կատաղօրէն պիտի դատապարտեմ ու պատժել տամ Խդրեաններին (նա՛եւ իրեն), նա Բալկանը սատանայական հաշւով խառնշտկեց, որ զայն զրկէ պատգամաւոր ունենալու իրաւունքից - նա ընդի[անուր] ժողովում - եթէ Ամերիկան եւ մեր այլ շրջանները չկարողացան պատին սեղմել չարագործներին՝ նա այս անգամ էլ կփրկի եւ հազար ու մէկ մեքենայութիւններով կպարտադրի իրեն: Ամէն անգամ, երբ այդ հրէշը նեղը կընկնի (Տարօնի աղէտը, Զաւուշի սպանութիւնը, Ղարսի սկանդալը, 1933ի Փարիզեան խայտառակութիւնը եւ այլն) արհեստական կերպով ծնունդ կուտայ ներքին կուսակցական թնճուկների եւ այսպիսով կուսակցութեան ամբողջ ուշադրութիւնը կգբաղեցնէ նրանցով, եւ վարպետօրէն կփրկի իր պոչը: 1921ին Թավրիզում Ղարսի սկանդալը մարսելու համար կուսակցութեան գերագոյն մարմինին համոզեց, որ ես պատրաստւում եմ Անդրանիկի պէս քաշւելու Դաշնակցութիւնից եւ ինձ կախակայել տւեց (կանխեց), պատճառաբանելով, թէ ես մարդկանց եմ ապտակել: 1933ին, ամենայն վարպետութեամբ հրահրեց Մարտկոցական շարժումը (սուտ կազմեր ստեղծելով, ինչպէս այսօր Բուլղարիայում) եւ գլխատել տւեց զայն՝ իր գլուխը անգամ մը եւս փրկելու համար: 1934ին, իմ բացակայութեան ժամանակ, իր լրտեսների միջոցաւ կխառնշտկէ Բալկանը, 1935ին Պարսկաստանը, 1936ին՝ Սուրիան - սեւ քուէներից ազատւելու նպատակով:

Այդ մարդու շնորհիւ ոչ թէ բարոյա-քաղաքականապէս, այլ եւ թւապէս չէ աճում Դաշնակցութիւնը: Վերջին 20 տարւայ ընթացքում այս շահատակողը կուսակցութիւնից որպէս ամսական ստացած կլինի աւելի քան 2 միլլիոն բուլղ[արական] լեվա, որի դիմաց, իր ողջ կեանքում, Դաշնակցութեան համար շահած չէ եւ՛ ոչ մի հատիկ մարդ: Որքան վարպետորդի է, այնքան դերասան: Ժողովրդին եգիպտական հին փարաւոնների նման, քիչ կ'երեվայ, կ'ապրի մութի մէջ, եւ այնպէս կընէ, որ իր մասին խօսւի, թէ յեղափոխական ակտեր կազմակերպելով է զբաղւած: Եգիպտոսի շարքայինները կխօսէին, թէ Տէր Մինասեանը անցած է Տերսիմ, երբ նա Բերլինում հիւր էր իր եղբօրը: Այս վերջին երեք տարիները աւելի ակտիւացած է իր ներքին չարագործութեան մէջ: Կատու է՝ աղուէսաբար առիւծի ինքնապաշտպանութիւն կկեղծէ:

Ողջ տարօնցիութիւնը իր դէմ է: Այս տարի Վրացեանը նրան իր «Վէմ»ի մէջ յայտարարեց՝ «տգէտ», «բոլշեւիզմը արդարացնող քաջազնունի»: Իսկ մի տարի առաջ Վահան Փափազեանը նրան նոյն «Վէմ»ի մէջ հռչակեց ժողովուրդասպան (Տարօն, Սասուն): Տ[արօն] Տուրուբերանի [Հայրենակցական Միության] կ[ենտրոնական] վարչութիւնը Ռ. Տէր Մինասեանին բարոյապէս պատժած լինելու համար Հայկ Ասատրեանին կարգած է իր պաշտօնական թերթի խմբագիր: Նոյն վարչութիւնը դիմած է ինձ հետեւեալ գրութեամբ՝ «...այդ կ[ենտրոնական] կոմիտէն (խօսքը տեղիդ նախին կ[ենտրոնական] կոմիտէի մասին է, որի միջոցաւ Տէր Մինասեանը կփորձէր Տ[արոն] Տուրուբերանի կ[ենտրոնական] վարչութիւնը կտրել Հայկէն) կողմ նկատելով անոր թելադրանքներու հանդէպ վերապահ պիտի մնանք: Ձեզ նկատած ենք անաչառ դատաւոր այս ...[57], կսպասենք Ձեր վճռին, որ մեզ համար ընդունելի պիտի լինի»...

Ասեմ, որ Տ[արոն] Տուրուբերանի վերջին պատգամաւ[որական] ժողովը շատ լուրջ որոշումներ է առած, որոնք միայն պատիւ կարող են բերել իրեն: Կուզէի, որ կապուէիր Տ[արոն] Տ[ուրուբերանի] կ[ենտրոնական] վարչութեան քարտուղար Տէր Իսրայէլեանի հետ: Պէտք է ակտիւանալ, պէտք է զգացնել տալ դաւադիրին, որ այլեւս Դաշնակցութիւնը «անշուն գիւղ» չէ, որ շարքերը այլեւս գիտեն, որ Տէր Մինասեանների գործը քամի է, եւ ուրիշ ոչինչ:

Օհաննէս, սիրելիս, մի՛ զարմանար, եթէ ասեմ որ Տէր Մինասեանների դատարկապորտութիւնը սնուցանողը Ամերիկան է, այլեւս վայել չէ անգամ ամենապարզ շարքայինին, որ «եաշասն»[58] կանչէ եւ գիշերները հանգիստ քնանայ: Առիթն եկած է - Տէր Մինասեանը կատարեալ աղէտի մատնեց Ամերիկան - պէտք է սանձը քաշել եւ իր իսկական տեղը ցոյց տալ այդ տաղանդաւոր ինտրիգանին - Ռոստոմի մահէն յետոյ Տէր Մինասեանները երկու սուտ աստուածութիւնների պաշտամունքը կքարոզեն - կարգապահութիւն եւ կուսակցական մեքենա - այս երկու բաները կշահագործեն ճիշտ այնպէս, ինչպէս խաչագողը՝ խաչը: Կարգապահութիւն - ի՞նչ է դա: Ըստ Տէր Մինասեանի՝ կուսակցական ու հոգեւոր էշութիւն, որ շարքայինները պարտաւոր են ցոյց տալու, բոլոր դէպքերում, անգամ երբ «շէֆ»ը ժողովուրդը թողնում է կրակների մէջ եւ փախչում: Ոչ մի «քաւոր Պետրոս» այնքան օգտուած չէ այդ անբովանդակ խօսքէն, որքան՝ Տէր Մինասեանը: Կարգապահութի՞ւն: Ճշմարիտ կարգապահութիւն ասել է՝ շարքայինների հաւատը դէպի իրենց ղեկավարների ամէն վայրկեան Հայաստանի համար մեռնելու, յանդգնելու, մի բան ճարտարելու կարողութիւնը: Շարքերի մէջ կա՞յ այդ հաւատը: Ո՛չ չկայ: Իսկ չկայ, որովհետեւ ղեկավարների մէջ հերոսական-բարոյական գործելու, զոհաբերելու, քաջաբար մեռնելու տրամադրութիւն չկայ: Ուրեմն, շարլատանութիւն է խօսիլ շարքերի կարգապահութեան մասին, երբ ղեկավարութեան պակասում են սովորական մահկանացուներին յատուկ առաքինութիւնը: Ամէն ծառայութիւն, որ դառնում է վճարովի արհեստ՝ պղծւում է: Բալկան, Պարսկաստան, Սուրիա - այս բոլոր վայրերում ցաւ կայ, խռովք, հայրենապաշտութիւն եւ դաշնակցական խոր ուղղափառութիւն: Այս շրջաններում այլեւս շարքայինը կառքի ձիերի պէս աչքակալներ չէ կրում: Նա ուզում է իսկապէս եւ գիտակցօրէն օգտակար լինել իր ազգին - եւ սրա համար էլ ուզում է, որ Դաշնակցութիւնը ծառայէ իր կոչումին, ոչ թէ Տէր Մինասեանի հացին: Շատ երկարեցի: Այժմ կոնկրետացնեմ խօսքս:

1. Նախապատրաստիր քեզ գաղափարակից տարրերը, որ հաւաքաբար բողոքեն ընդհ[հանուր] ժողովին եւ հասկացնեն, որ եթէ Խդրեանը եւ իր դաւակիցները չպատժւեն-չքշւեն կուսակցութիւնից՝ հազարաւոր ընկերներ Ամերիկայէն պայմանադրաբար կքաշւեն կուսակցութիւնից, կ'ինքնամեկուսանան, մինչեւ որ նոր Բիւրօն կքննէ տեղի ունեցած դաւը եւ արդար պատիժներ կսահմանի: Լաւ գիտցէք, որ միայն այս վճռական քայլով կարելի պիտի լինի փրկել Դաշնակցութիւնը մութ ու շահագործող չարագործներից եւ այսպիսով նրան կարելիութիւն տալ, որ ծառայի Հայաստանին եւ հայ ժողովրդին:

2. Տէր Մինասեանը ձեր պատգ[ամաւորական] ժողովի տրամադրութիւններն ու որոշումները ծաղրելու համար՝ Խդրեան կոչւածին լիազօր կարգեց, ուղարկեց Բալկան նորանոր դաւերի համար, եւ ապա քաշեց տարաւ Եգիպտոս: Եթէ այդ կանոնագրա-բարոյական սկանդալը ներէք, մոռանաք՝ Զաւարեանի եւ Ռոստոմի արթուն խղճմտանքը պիտի դատապարտէ ձեզ: Խնդիր դարձրէք այդ աղաղակող վատութիւնը: Տէր Մինասեանը առանց սպասելու ընդհ[հանուր] ժողովի դատաստանին՝ արդէն բարոյապէս արդարացրած է իր գործակալ Խդրեանին: Ի՞նչ է մտածում ձեր կ[ենտրոնական] կոմիտէն, ինչո՞ւ է լուռ, որոշ կարծիք չունի նա: Գրէ երկարօրէն եւ շուտով:

Ցգրութիւն:

Համբոյրներով՝ Նժդեհ

15.

[1938թ.]

Սիրելի Օհաննէս,

«Հայրենիք» օրաթերթի մէջ (սեպտ.[եմբերի] 28) աչքէ անցուցի Ցեղակրօն Ուխտերու պատգ[ամաւորական] ժողովի որոշումները եւ եկայ այն տխուր եզրակացութեան, որ մեր ստեղծած այնքան կենսու-

նակ ու խոստմնալի շարժումը ապրում է իր վայրէջքը՝ իր կոչումի եւ առաջադրութեանց բարձունքէն: Առնւած որոշումները վայել են մի շատ հասարակ երիտասարդական ընկերութեան, եւ ոչ մի դէպքում ցեղային խռով ապրող եւ յանուն վտանգւած ցեղի ուխտւած մի կազմակերպութեան:

Որոշումների մէջ չկայ եւ ոչ մի հատիկ բառ Ցեղակրօնութեան, ուզում եմ ասել՝ Ցեղակրօն Ուխտերի դաւանանքի մասին: Ղարսի սերունդը գաղջ վերաբերմունք ունէր դէպի այդ դաւանանքը, եւ այսօր ուխտերէն խլւած է այն: «Առանձնապէս ուսումնասիրել Դաշնակցութեան եւ Հայ Կ[արմիր] խաչի ծրագիր-կանոնագիրը» - մի սերունդ, որի «առանձնապէս»ը կանոնագրեր ուսումնասիրելն է դառնում, նա դժւար թէ շատ բանով տարբերւի Խդրեաններէն ու Համօներէն:

«Ց[եղակրօն] Ուխտերը կը համարւին Հ.Յ.Դ. ենթակայ քաղաքական դպրոցներ»: Այդ այդպէս համարելով հանդերձ, խնդրւում է՝ ա) «Հնարաւորութիւն տալ բոլոր Ցեղակրօն Ուխտերուն օգտւելու Դաշնակցութեան ակումբներէն՝ ժողովներու եւ հանդէսներու համար»: բ) «Պարտադրել բոլոր կոմիտէներուն, որ կազմակերպելիք կարեւոր հանդէսներուն անպայման մասնակից ընեն Ցեղակրօն Ուխտերը»: գ) «Կոմիտէներուն եւ Ց[եղակրօն] Ուխտերուն միջեւ ստեղծել սերտ եւ ընկ[երական] յարաբերութիւններ»: դ) «Աջակցութիւն ցոյց տալ (կոմիտէներէն) տեղին վրայ գոյութիւն ունեցող Ց[եղակրօն] Ուխտերուն», եւ այլն: Որոշումների այդ մասին արտաքին աշխարհը չէր կարող չգալ այն տրամաբանական եզրակացութեան, թէ կոմիտէների վերաբերմունքը դէպի Ուխտերը եղած է պաղ եւ անբարեացակամ: Սակայն, այդ չէ էականը: Անդրադարձիր, որ առաջին անգամ է, ինչ «Հայրենիք»ի մէջ երեւում է այս կամ այն կազմակերպութեան (Դաշնակցութեան Կարմիր խաչ, Ցեղ[ակրօն] Ուխտեր) առած որոշումները: Այդ բանը արւած է որոշ հոգեբանական հաշիւներով, այն է՝ արտասահմանին հասկացնելու, թէ «այս պատգամաւորական ժողովը նշանակալից է նաեւ այն տեսակէտով, որ հիմնական վերամշակութեան ենթարկեց ցեղակրօններու ծրագիր կանոնագիրը, որ պիտի ներկայացուի Դաշնակցութեան ընդհ[անուր] պատգ[աւորական] ժողովին՝ վերջնականապէս ծեւակերպելու համար: Մինչ այդ պատգամաւորականը վերցուց իր ծրագրէն Շաւասպեան եւ Յառաջապահ անուանակոչութիւնները» եւ այլն: Ե՞րբ է տեսնւած, որ թէկուզ ամէնէն հասարակ միութիւնը, կազմակերպութիւնը իր որոշումները փողոցի սեփականութիւնը դարձնէ: Որոշումները վերաբերում են տեւալ կազմակերպութեան եւ նրանք ներքին շրջաբերականով հաղորդւում են նրա մասնաճիւղերին, եթէ գոյութիւն ունին: Դա արւած է՝ արտասահմանին հասկացնելու, թէ

իզուր աշխատանք է Ցեղակրօն Ուխտեր ստեղծելը, քանզի Դաշնակցութիւնը որոշած է աստիճանական այլանդակումով ոչնչացնել այդ կազմակերպութիւնը: Եղածը վատթարագոյն հարւածն է, որ տրւում է Ցեղակրօնութեան, եւ այդ այն օրերին, երբ գրեթէ մեր բոլոր գաղութներում ցեղային խռովք է սկսւած (երեւի կարդացիր «Յառաջ»ի զայրալից հարցումը - «ինչո՞ւ կուշանայ Ցեղակրօնութիւնը Ֆրանսայի մէջ. ո՞վ է ասոր պատճառը»): Արդէն սպանւած է շարժումի հիմնական գաղափարը, նրա դաւանանքը եւ շուտով հերթը կուգայ անունին: Դաշնակցութիւնը թունաւորող ծանօթ թայֆան իրեն թշնամի է յայտարարում այն ամէնը, ինչ որ բարոյապէս իրեն չի նմանում: Հոգեւոր դիակի պէտք է վերածել նաեւ Ցեղակրօնութիւնը, որ նման է իրենց: Ամերիկայի մէջ պէտք է քանդել դա, որպէսզի դա հող եւ ազդեցութիւն չնուաճէ արտասահմանում: Այս է թայֆայի պլանը, այս է Ղարսի սերունդի հայրենասիրութիւնը: Այսպէս է աշխատում ծանօթ մաֆիան: Դուք ի՞նչ էք անում: Մաֆիան իր առաջին հարւածը հասցրեց Ցեղակրօնութեան, թէ այժմ յաղթականի նման իր «բեխերն է ոլորում»: Իսկ դո՞ւք: Գիտցի՛ր, որ «հիմնական վերամշակութիւն» ասելով դաւադիրները հասկանում են ցեղակրօն անւան փոփոխութիւնը: Երկրորդ եւ վերջին հարւածը կնախապատրաստեն նոր հրաւիրելիք գործիչի միջոցաւ: Ա-ին ամենափայլուն կերպով կատարեց իր դերը: Համոզւեցի, որ տեղիդ գաղափարաշունչ տարրերը հրապարակը թողած են մաֆիայի մարդկանց: Ցաւում եմ: Տասը մարդ էր հարկաւոր, որ ծանօթ ներքին պրովոկասիոնէն յետոյ, Նազովրեցու խարազանով տաճարէն քշէր վատերին: Դուք չարիք այդ: «Կարգապահութեան դէմ չմեղանչենք»՝ մտածեցիք, եւ հրապարակը թողեցիք դաւադիրներին: Կարգապահութի՞ւն, ա՛հ, այդ զզւելի բառը, որը յաճախ մղում է մարդկանց մեղանչելու իրենց ազգի եւ Հայրենիքի դէմ: Այն, որ մաֆիան անւանում է կարգապահութիւն, էապէս հոգեսպանութիւն է: Շուտով կվերադառնան ձեր պատգամաւորները, եւ կտեսնէք, որ ընդհանուր ժողովում էլ յաղթանակել է «կարգապահութիւն»ը, եւ ոչ թէ Դաշնակցութիւնը, ազգը: Չերկարեմ այդ մասին: Կուզէի ասել, որ եթէ տեղիդ գաղափարական տարրը մի քիչ աւելի ակտիւ լինէին, չէր լինի այն, ինչ որ եղաւ: Դու գիտես, որ Ցեղակրօն Ուխտերի անդրանիկ պատգամաւորական ժողովի նախօրեակին Բիւրօն մի գրութեամբ կպահանջէր «ցեղակրօն սերունդ»ի փոխարէն գործածել «հայ սերունդ»[1] բացատրութիւնը:

[1] Ինչ ասել է «հայ սերունդ»: Մի մեռեալ բառ առանց բովանդակութեան: «Հայ սերունդ»ի մէջ չեն մտնում ռամկավարը, հնչակը, քաղաքականապէս անտարբեր հայը:

Վատութեան այդ դոկիումանը մօտս է: Ամբողջ 5 տարի է, ինչ թշնամանքը կգործէ Ցեղակրօնութեան դէմ: Եւ այն բոլոր դաւերն ու վատութիւնները, որ կատարեցին եւ կշարունակեն կատարել, մի նպատակ ունէին - քանդել Ցեղակրօնութիւնը:

Երեւի գիտես, որ Վրացեանը հրաժարուեց մասնակցել «ընդհանուր ժողով»ին: Նա գրած է ընկ. Ս. Արարատեանին հետեւեալը - «ընդհանուր ժողովից միայն չարիք եմ սպասում»: Նա պայման է դրել ժողովին մասնակցելու - ժողովը հրաւիրել ոչ Եգիպտոսում եւ հնարաւորութիւն տալ մասնակցելու բոլոր պատասխանատու ընկերներին: Իրեն առաջարկը մերժեցին, ուստի ինքն էլ հրաժարուել է պատգամաւորի կոչումից, որովհետեւ «այդպիսի պայմաններում ես անելիք չունեմ, ու ամէն մի պարկեշտ դաշնակցական այդպէս պիտի վարի» (գրում է Վրացեանը): Նա գտնում է, որ «Բիւրօն որոշ գիծ է տանում, կենտրոնացում է մտցրել, կործանում է կուսակցութիւնը, եւ անհնարին է որեւէ բան անել, քանի որ երկրից եկած 20-25 պատասխանատու ընկերներս «իրար միս ենք ծամում եւ սկսել ենք հոտել»: Վրացեանի կարծիքով, եթէ հնարաւոր չեղաւ ընդ[հանուր] ժողովը յետաձգելու, ապա մի հեղինակաւոր մարմին ընտրել - ամէն ինչ կորած է, եթէ չասենք նաեւ աւելորդ է լուրջ հարցերի մասին մտածելը: Նա, Վրացեանը այսպէս է դատում - «ուրիշ մարդ չգտնելով (խօսքը հին Բիւրօի մասին է) իրենք պիտի վերընտրեն եւ մի երկու հացկատակներ էլ կմտցնեն իբրեւ թարմութիւն»: Ահա նախկին Բիւրօնների անդամի կարծիքը օրուայ Բիւրօի եւ նրա խարդախած ընդ[հանուր] ժողովի մասին: Այո՛, սկսել են «նեխել», իսկ ուր նեխութիւն կայ, այնտեղ բարոյական մաքրութիւն, ազգային բարձր մտահոգութիւն չի կարող լինել: Նեխող ղեկավարութիւնը կնեխեցնէ իր կուսակցութիւնը եւ ժողովուրդը, իր նորահաս սերունդը - իր «հացկատակային» ղեկավարութիւնը վայելող ամէն անհատ եւ խմբակցութիւն:

Այդ հոգեւոր նեխութիւնն է ահա՛, որ ինձ բերած է այն եզրակացութեան, թէ կորած պիտի համարել մեր ժողովուրդը եւ իր Հայրենիքը, եթէ մի խորունկ եւ զօրաւոր հոգեւոր վերանորոգումի չենթարկենք տարագիր հայութիւնը: Ամէն քաղաքական ու յեղափոխական շարժում եղած է աղէտաւոր ժողովուրդի համար, երբ քաղաքականին զուգահեռ չէ տարուած նա՛եւ ժողովրդի հոգեւոր վերանորոգումի, վերադաստիարակութեան գործը: Մեր յեղափոխութիւնը մորթել տուեց մեր ժողովրդի կէսէն աւելին, որովհետեւ չհոգեփոխած վերջինը՝ նրանից մարտունակութիւն, կռիւ եւ յաղթանակ պահանջեցինք:

Այդ մտահոգութեան ծնունդն է Տարօնականութիւնը, որի դէմ նոյնպէս դաւեց ծանօթ մաֆիան: Տարօնականութիւնը ոչ քաղաքական

շարժում է, ոչ լոզունգ, դա միայն եւ միմիայն օրուայ «նեխած» հայը Մամիկոնեանների բարոյականով հոգեփոխելու մի միջոց է: Պարզուեց, որ հայ կուսակցութիւնները ոչ թէ տարրական հասկացողութիւն չունին օրուայ մարդկութեան հանրային ու ազգային կեանքը վարող օրէնքների մասին, այլ եւ թշնամին ամէն մի նոր գաղափարի եւ գաղափարական շարժման: «Նեխել»ով՝ նրանք նեխութիւն են տարածում եւ շարունակում են իրենց «հացկատակութիւն»ը համարել ազգ[ային] գործ՝ իրենց եւ ազգը խաբելով:

Տարօնականութեամբ՝ Մամիկոնեանների բարձր նուիրումով պէտք է թրծել օրուայ Հայը, եթէ ուզում ենք ամէն բանից առաւել փրկել Դաշնակցութիւնը: Տարօնականութեան դէմ եղած հրապարակային ելոյթները (Վրացեանը եւ «Նոր օր»ի ասորի խմբագիրը[59]) աւելի թեւաւորեցին Տ[արոն] Տուրուբերանի հայրենակցական միութիւնները եւ նրանց վարիչ կենտր[ոնական] վարչութիւնը: Տարօնականութիւնը - դա միեւնոյն Ցեղակրօնութիւնն է հասակն առած սերունդի համար: Մէկը - Ցեղակրօնութիւնը - հալածողը, միւսի բարեկամը չէր դառնայ: Մաֆիան սկսած է դաւել նաեւ Տ[արոն] Տուրուբերանի [Հայրենակցական Միության] սկսած հոգեւոր շարժման դէմ: «Թողէք, որ «նեխութիւն»ը շարունակի, թողէք որ նեխինք, մեզնից յետոյ - ջրհեղեղ» - ա՛յս է ուզում Ղարսի սերունդը: «Չէ՛ - պիտի ասի նեխութեան սիրահարներին ամէն հոգեպէս անխաթար դաշնակցական,- չէ՛, հակառակ նեխելու եւ մեռնելու ձեր ցանկութեան, մենք պիտի փրկենք ձեզ»:

Օհաննէ՛ս, սիրելիս, ես կուզէի, որ դու եւ քեզ նման նուիրումի ընդունակ մեր բոլոր ընկերները այս կեցուածքն ունենային: Եղէ՛ք վճռական, շատ մի գերագնահատէք «կարգապահութիւն» ասուած բանը, որ մեր եգիպտոսցիների ծիծաղն է շարժում:

Լսեցի, որ «Հայրենիք»ը հրաժարուել է Տարօն Տուրուբերանի կ[ենտրոնական] վարչութեան յայտարարութիւնը դնել: Չէի սպասում: Ձեր կ[ենտրոնական] կ[ոմիտ]էն աւելին գիտէ այն մարդկանց կուսակցաւեր արարքների մասին, քան Դաշնակցութեան այլ մարմինները: Ձեր կ[ենտրոնական] կ[ոմիտ]էն պէտք է հասկացնէր այդ պարոններին, որ չէ կարելի կուսակցութիւնը վերածել թայֆայի, եւ զայն հանել ամէն գաղափարական խռովքի ու շարժման դէմ, որոնցից առաջին օգտուողը պիտի լինի Դաշնակցութիւնը:

Ամիսներ առաջ ինձ կգրէիր, որ ես եմ ընտրել Ռուբէնը եւ այլն: Սխալւում ես, Ռուբէնին նոր չէ, որ ճանաչում եմ. ես նրան քուէ չէի տայ, եթէ նա իր դաւամտութեամբ Համօին[60] հոգեպէս նուաճած չլինէր: Համօն պայման դրեց - «եթէ թոյլ չտաք, որ Ռ[ուբէն]ը ընտրուի, ես չեմ մտնի Բիւրօի մէջ»: Համօի այդ աղէտալի սխալը եւ անձնական

բարեկամութիւնը պատճառ դարձան, որ նախկին Բիւրօի անդամներէն ամենադատապարտելիին քուէ տանք: Վերջապէս, խոմ չընտրեցինք նրա համար, որ ամբողջ վեց տարի դաւեր սարքէ եւ շրջաններ քանդէ: Գիտես, անշուշտ, որ Յունաստանէն տարան իրենց մարդը - Լազեանին, իսկ Կ. Գէորգեանին[61] («Հորիզոն»ի խմբագիրը) չտարան: Եգիպտական իշխանութիւնը վիզա է «տուել» Լազեանին, իսկ Կարօին «մերժել է տալ», հակառակ որ երկուսն էլ միեւնոյն վայրից են, երկուսն էլ յունահպատակ եւ դաշնակցական: Ռոմանիայէն տարած են մէկին, որի անունը իր շրջանի ընկերները առանց թքելու չեն արտասանի: Այժմ խռովուած է նաեւ Ռոմանիան, որովհետեւ «պատգամաւոր»ը մեկնել է առանց նոր շրջ[անային] ժողովից ընտրուած լինելու: Իսկ Խդրեան կոչուած գործակալի ներկայութիւնը Գահիրէում կլրացնէ պատկերը: Չգիտեմ, թէ ձեր պատգամաւորները որքան մտքի եւ խղճմտանքի անկախութիւն կցուցադրեն ընդհ[անուր] ժողովում, բայց կանխաւ ասեմ, որ մաֆիային կյաջողէ մարսել եւ «Նիւ-Եորք»ը[62], եւ այդ էլ յանուն այն «կարգապահութեան», որը պահանջողները հայոց ազգին եւ Դաշնակցութեան «Ղարս»էն[63] զատ ուրիշ բան չեն տուած:

Ինձ չգրեցիր - կարծում եմ, որ չես մասնակցել Ցեղ[ակրօն] Ուխտերի պատգամաւորականին: Եթէ ճիշտ է «կարծեմ»ս, լաւ չես արել: Այստեղ մաֆիայի գործակալները լուրեր են տարածում, թէ ընդհ[անուր] ժող[ովը] վերջացել է, որ Սուրիան «հաշտուել է», եւ այլն, եւ այլն: Բարի եղիր, խնդրեմ, երկարօրէն գրելու ինձ (պատգամաւորներին լսելուց յետոյ եւ առաջ) այն ամէնը, ինչ որ գիտես ընդհ[անուր] [ժողովի] առած որոշումների մասին:

Գրի՛ր նա՛եւ, թէ ի՞նչ պիտի անէք, եթէ ծանօթ ներքին պրովոկասիոնի հեղինակները պատժուած լինելու փոխարէն «վարձատրուած» լինեն, այսինքը՝ վերընտրուած լինեն: Կարո՞ղ է նման բան՝ պիտի գոռայ խղճմտանքդ - այո՛, մեր իրականութեան մէջ ամէն ինչ կարող է լինել:

Ամէն անգամ - հաստատում է պատմութիւնը - երբ ժողովուրդը բարոյական քաջութիւն չի ունենում պատժելու իր դժբախտութեան հեղինակներին, այդ միեւնոյն հեղինակների միջոցաւ պատմութիւնը պատժում է ժողովուրդին: Ահա՛, սիրելիս, թէ ի՞նչն է տագնապեցնում ինձ:

Քանի դեռ չարագործները եթէ ոչ պատժելու, գոնէ չէզոքացնելու քաջութիւն չունի Դաշնակցութիւնը՝ նորանոր պատիժները անպակաս կլինեն իր գլխէն:

Սիրով եւ եղբայրօրէն՝ **Նժդեհ**

Բարեւիր դոքտորին, Վերածինին[64], Անգինին եւ այլոց:

P. S. Տեղիդ «Արարա» կոմիտէն[65] երկու ամիս առաջ ինձանից մի գրութիւն ուզեց, եւ ես գրեցի, ուղարկեցի Սմրվիլ իրենց տուած հասցէին: «Հայրենիք»ի բացառիկում չ'երեւաց: Չլինի թէ Բիւրօի «աստուածային» հրամանով «Հայրենիք»ում արգիլուած են նա՛եւ իմ յօդուածները: Իսկապէս, որ Դաշնակցութեան Բիւրօն քսաներորդ դարում ապրում է իր խաւարամիտ միջնադարը:

Նոյնը

16.

[1938թ.]

Սիրելի ընկերներ,

Ինձանից, ինչպէս եւ շրջանիցս քիչ գրութիւններ չէք ստացել՝ իմ եւ շրջանիս դէմ նիւթուած աննախընթաց դաւի մասին: Ձեզ շուտով կուղարկի տեղիս կազմի ամբաստանագիրը, եւ դուք հնարաւորութիւն կունենաք յստակ գաղափար կազմելու դաւի մեխանիզմի եւ դաւադիրների մեքենայութեանց մասին: Մինչ այդ, կուզէի մի քանի խօսքով ձեզ տալ դաւի պատմութեան կմախքը, որպէսզի ժամ առաջ դիմէք անհրաժեշտ միջոցների՝ փրկելու համար ոչ թէ խաչուած ճշմարտութիւնը, այլ Դաշնակցութեան բարոյականը, առանց որին կուսակցութիւնները, անկախ իրենց դաւանանքէն եւ հետապնդած նպատակներէն, դառնում են մաֆիա - գործիք անձնապէս շահագրգռուած որոշ անհատների ձեռքում - դառնում են չարիք իրենց ժողովրդի համար:

1. Նիւ Եորքի պրովոկասիոնի[66] գաղափարը յղացել է Բ[իւրօ]ն: Դա ոչ թէ եռագոյնի համար էր, այլ խմորուող Ցեղակրօն շարժման եւ զայն սկսողի անձի դէմ: Գիտէք անշուշտ, որ 1933ի ընդհ[անուր] ժողովը որոշած էր նորահաս սերունդը կազմակերպել անկուսակցական գետնի վրայ՝ կուսակցական ղեկավարութեամբ: Հակառակ սրան՝ Բիւրօն Ցեղ[ակրոն] Ուխտ[երի] Պատգ[ամավորական] ժողովի նախօրեակին պահանջեց կուսակցականացնել Ցեղակրօնութիւնը:

Ինձ ուղղած իր գրութեան մէջ Բ[իւրօ]ն առաջարկում է Ցեղակրօն «անաւ» փոխարէն գործածել Հայ անունը: Ես չըրի այդ, որովհետեւ «հայ» է եւ՛ ռամկավարը, եւ՛ հնչակեանը, եւ՛ բոլշեւիկը: Կարելի է անունով հայ լինել, բայց ցեղակրօն չլինել: Ես դաւան[ան]ք էի քարոզել եւ ոչ թէ դատարկ անուն: Բ[իւրօ]ի այդ անսպասելի միջամտութիւնը ժամանակին կուգար մատնելու իր թշնամանքը այդ շարժման դէմ:

Նա չհաշտուեց մեր ստեղծած շարժման հետ: Իմ՝ Ամերիկան թողնելէն յետոյ եւ մինչեւ այսօր Ցեղակրօնութիւնը ապրում է իբրեւ

սոսկական անուն եւ ոչ թէ իբրեւ դաւանանք: Անգամ «Weekly»ն ցայսօր մի հատիկ տող գրած չէ ցեղակրօն դաւանանքի մասին: Երկու տարի առաջ Բ[իւրօ]ի այն հրահանգը, որով Եւրոպայի Ցեղակրօն Ուխտերի կապը կկտրէր Ամերիկայի կ[ենտրոնական] վարչութիւնից՝ նոյնպէս կուգար մատնելու հրահանգողի թշնամանքը: Իսկ Դեդրօիդի մէջ գումարուած պատգամաւորական ժողովի առած մի քանի որոշումները կմատնեն, որ Բիւրօն վճռած է բարոյապէս լրջել Ցեղակրօնութիւնը եւ նրանից խլել անգամ իր անունը: Թէ ինչեր կորցրեց գաղութի հայութիւնը Բ[իւրօ]ի այդ թշնամանքէն՝ մի օր կտեսնենք, կզգանք:

Մի՛ կարծէք, որ Բ[իւրօ]ի դաւանանքին դէմ է: Այդ մարմնի մէջ մարդիկ կան, որոնք անդաւանանք կոչուելու աստիճան խառնադաւան են եւ՝ «սոցիալիստ» են եւ՝ «ցեղապաշտ»՝ նայած տեղին ու յարմարութեան: Նրանք դէմ են իմ՝ տեղիդ նորահաս սերունդի հետ ունեցած բարոյական կապին, որը կտրելու համար անհրաժեշտ է Ցեղակրօնութիւնէն խլել իր անունը եւ դաւանանքը: Խդրեանը յաջողած էր համոզել Բ[իւրօ]ին, որ եթէ Ցեղակրօն Ուխտերը չ'առնուին Բիւրօի մարդկանց ազդեցութեան տակ՝ նրանք կուժեղացնեն ձեզ եւ ինձ: Գիտցէ՛ք, այդ կռիւը Ցեղակրօն Ուխտերին տէր դառնալու նպատակով է տարուում: Աւելի ճիշտը՝ կռիւը տարուում է Ամերիկայի շուրջը:

Բ[իւրօ]ն թեթեւ սրտով կհրաժարուի (ինչպէս իր համար փաստօրէն գոյութիւն չունին Սուրիան, Պարսկաստանը եւ Բուլղարիան) իր բոլոր շրջաններէն, միայն ոչ եւ ամերիկացիներ կազմեն: Բիւրօի նիւթականը - ամսականները ապահովողը Ամերիկան է - ահա՛ թէ ինչու նա միջոցների մէջ խտրութիւն չի դնում չէզոքացնելու ամէն հոգեւոր ազդեցութիւն այդ շրջանում: Իմ օրով - Ցեղակրօնութեամբ դա վտանգաւոր համարեց Ամերիկան իր համար, եւ չքաշուեց դիմելու դաւերէն ամենադիւայինին: Ինձանից յետոյ նա Ամերիկա է ուղարկել իր գործակալները՝ որոշ գաղտնի առաքելութեամբ: Եկողներին հրահանգուում է՝ աշխատել տկարացնելու ձեր ազդեցութիւնը Ցեղակրօն Ուխտերի վրայ: Եւ այսուհետեւ էլ տեղդ եկող գործիչները կլինեն Բ[իւրօ]ի գործակալները, եթէ դուք չակտիւացաք:

2. Ցեղակրօն շարժումը սպանելու համար Բիւրօն իր մարդկանց միջոցաւ դաւեց իմ անձի դէմ նաեւ Բուլղարիայում: Գիտէք, որ ինձ բուլղար իշխանութեանց հրամանով խուզարկեցին դեռ սահմանագլխի վրայ: Մի խումբ «դաշնակցական»ներ՝ միացած դուրեանական հոսանքներին՝ հրապարակում կ'աղմկէին, թէ Դ[ուրյանին] սպանել տուողը Նժդեհն է: Սրանով կծգտէին գրգռել հայութեան որոշ տարրերն ու իշխանութիւնները իմ անձի դէմ՝ հասկացնելով վերջիններին, որ Ցեղակրօնութեան անդրանիկ գործն եղաւ Դ[ուրյան]ի սպանութիւնը,

նոր սպանութիւններ տեղի կունենան նա՛եւ այս երկրում, եթէ ինձ կարելիութիւն տրուի Ցեղակրօնութիւնը տարածելու:

Մի շարժում վարկաբեկելու համար մեր աշխարհի սրիկայութիւնը միշտ էլ աշխատել է կամ վարկաբեկել կամ էլ սպանել տալ նրա վարիչին: Իսկ պէտք էր ինձ համար Բալկանում առնուազը փափուկ դրութիւն ստեղծել, որպէսզի իշխանութիւնը եւ հայ հանրային կարծիքը անկարելի դարձնեն Ցեղակրօնութեան տարածումը իմ ապրած երկրում: Թէ ի՞նչ գաղտնի ժուռնալներ են դրուած իշխանութեանց՝ այդ մասին կկարդաք շրջանիս ամբաստանագրի մէջ: Բիւրօն հասած էր իր նպատակին - հայութիւնը Դ[ուրեան]ի սպանութիւնը կվերագրէր ինձ, եւ վրէժ լուծելու համար կշարունակէր դաւեր նիւթել իմ անձի դէմ: Բիւրօն գիտէր, որ ես դաւադրուած եմ, եւ եթէ իր հաշուին չգար այդ բանը՝ նա ինձ դուրս կբերէր այս շրջանէն, կուղարկէր մի այլ երկիր, մանաւանդ որ գիտէր, թէ գրեթէ, մեր բոլոր գաղութները կհրաւիրէին ինձ՝ նորահաս սերունդը ոտքի հանելու եւ՝ իրենց շրջաններում:

Բիւրօն - որի օրհնութեամբ իր մարդիկ ներքնապէս միացած հակադաշնակցական կազմակերպութիւններին կշարունակէին թշնամանել ինձ - ոչ թէ չաշխատեց դաւադրութեան օղակէն դուրս բերել ինձ, ընդհակառակը, նա ինձանից թաքցրեց, որ Հարաւային Ամերիկան խնդրում է գէթ վեց ամսով մեկնել այնտեղ: Նա՝ ինձ Բուլղարիոյ մէջ դաւադրուած ու վանդակուած պահելու նպատակով, այս շրջանէն հեռանալուս արգելք հանդիսացաւ նաեւ այն ժամանակ, երբ մեր հարեւան Յունաստանի պատգամաւորական ժողովը կխնդրէր այցելել իր կազմերը եւ ծնունդ տալ Ցեղակրօնութեանն: Իրերի այդ դրութեան մէջ դրսից ու ներսից դաւադրուած, Ցեղակրօն Ուխտեր ստեղծեցի եւ՝ Բալկաններում: Այս պարագան աւելի գրգռեց դաւադիր թշնամիներիս: Նրանք սկսեցին գործել կաշառելով: Հակադաշնակցական մի դրամատան դիրեկտորը իմ եւ Ցեղակրօնութեան դէմ դաւողներին զանազան անունների եւ ձեւերի տակ բաց կթողնէ աւելի քան 300,000 լեվա: Ծանօթ դրամատան դիրեկտորը եւ Բիւրօի մարդիկ գաղտնի ժողովներ կգումարեն դրամատան շէնքի մէջ, կհրաւիրեն երիտասարդ կազմակերպութեանց ներկայացուցիչներին, կխոստանան նրանց նիւթական միջոցներ տրամադրել, պայմանաւ, որ չմօտենան ցեղակրօններին եւ գործեն Ցեղակրօնութեան դէմ: Մեր կ[ենտրոնական] կոմիտէն ժամանակին կմերկացնէ դաւը եւ կփրկէ շրջանիս նորահաս սերունդը: Կգործենք թէ մենք, եւ թէ դաւադիրները:

Կուգայ օգոստոս 18-ը (1935), Եաւորովի[67] արձանի բացման օրը, որի առթիւ կազմակերպած մեր հանդիսութիւնները կվերածուին քաղաքական ցոյցի եւ խորապէս կգրգռեն ու աւելի եւս կ'ակտիւացնեն

Ցեղակրօնութեան եւ իմ թշնամիներին: Ծանօթ էք թուրք մամուլի որոշ օրգանների յարձակումներին իմ անձի դէմ: Այդ օրերին Սօֆիայում կգործէր զօրավար Միլլերին[68] առեւանգող Սկոբլինը[69], որը հակաբոլշեւիզմ կեղծելով՝ կգործէր բոլշեւիզմի համար: Ըստ ֆրանսական թերթերի - որ ձեռքիս տակ են - զօրավար Սկոբլինը բացի իր ընկերները Ռուսիոյ սահմանագլխին մատնելէն, ունէր նաեւ մի այլ դեր - բարոյապէս կամ ֆիզիքապէս ոչնչացնել նորահաս սերունդի ղեկավարներին: Միեւնոյն օրերին մեր դէմ կգործէր թուրք լրտեսութեան շեֆ Մեմդուխ բէյը, որի մասին իր ժամանակին հաղորդուած է Բիւրօին, եւ որի լուսանկարը մեզ մօտ է: Տեսնելով, որ միութեան մէջ մի <u>զենտրալ</u>[70] ամէն ինչ կատարում է, որպէսզի վնասէ ինձ եւ անկարելի դարձնէ Ցեղակրօնութեան տարածումը, ես պաշտօնապէս դիմեցի Բիւրօին եւ խնդրեցի (գիտենալով հանդերձ որ նա գիտէ)՝ հրահանգել մեր բոլոր կ[ենտրոնական] կ[ոմիտեներ]ին՝ իրենց շրջաններում ստեղծելու Ցեղակրօն Ուխտեր եւ միանալու Ամեր[իկայի] կենտր[ոնական] վարչութեան: Ինձ պատասխանեցին, որ իբրեւ թէ «որոշ մարմիններ դէմ են Ցեղակրօնութեան», որ դեռ չգիտեն, թէ ի՞նչ դուրս կուգայ Ամերիկայի մեր ուխտերից եւ այլն: Սրանից յետոյ, տեղիս Ցեղակրօնութեան թշնամիները հրապարակ նետեցին հետեւեալ զրոյցը - Ամերիկայի Ցեղակրօն Ուխտերի եւ դաշնակցական մարմինների միջեւ վէճ է ծագել, որի պատճառով Բիւրօի անդամ Նաւասարդեանը կ'երթայ քննութեան: Այդ օրերին Բիւրօի ներկայացուցիչը՝ Ջամալեան[71] Բերլինի մեր Ցեղակրօն Ուխտին խորհուրդներ կուտայ թողնել Ցեղակրօնութիւնը, մնալ չէզօք, անկուսակցական: Բիւրօի ընթացքը կթեւաւորէ Ցեղակրօնութեան դէմ դաւողներին: Դէպքերը կզարգանան Քրիստափոր[72] - Եաւորովին նուիրած մեր բուլղարերէն բացառիկը մի մութ ձեռք կտանէ (դեռ Թափառականը տպարանէն հրապարակ չելած) կյանձնի թուրք դեսպանատունը, որը պատճառ կդառնայ, որ երկրիս արտաքին գործոց նախարարը արգիլէ մեր հանդիսութիւնները եւ նորանոր մեծ ծախքերի մատնէ մեզ:

Մեր շրջանային ժողովը կպատժէ դաւադիրների խմբակը՝ արտաքսելով, կախակայելով: Վերջինները կսկսին այլեւս վրան բաց կերպով գործել շրջանիս դէմ:

Բիւրօն՝ շրջանային ժողովի պատիժներ հաստատելու փոխարէն՝ իր ընթացքով ոյժ կուտայ դաւադիրներին: Մենք կպահանջենք, որ Բիւրօի անդամը գայ տեղս - կհրաժարուին ուղարկել: Եւ մի օր շրջանս կուղարկեն Ցեղակրօնութեան դէմ դաւող, մեր շրջանի դաւադիրների հետ կապ պահող Լազեանին եւ Սարունուն, որոնց շրջանս կթքէ եւ ճամբու կդնէ: Դրօն կխոստովանի, որ իրեն ուղարկած են, գիտնալով

որ մեր յարաբերութիւնները ջերմ չեն, պարզապէս մեզ կուեցնելու նպատակով: Դրօի հետ հաշտեցարդարի կենթարկենք Բալկանի խնդիրը, եւ կհաղորդենք Բիւրօին: Վերջինը մեր կատարածը հաստատելու փոխարէն, շրջանս կհասցնի Խդրեան կոչուած պրովոկատորը, որին իր դաւադրական արարքների համար Բուրգասի տարօնցիները կ'անարգեն ու ճամբու կդնեն: Այդ վերջինը եկած էր երկու քուէներ ապահովելու իր եւ իր տէրերի համար: Նա կեղծ ցանկեր կպատրաստէ եւ կուղարկէ Բիւրօին, որն անմիջապէս կհաստատէ կեղծ կազմը: Խդրեանը իր դերը խաղալէ յետոյ, կկանչուի Եգիպտոս, որից յետոյ հրապարակ կնետուի հետեւեալ լուրը - Բալկանը Նժդեհի գլխաւորութեամբ աշխատած է տապալել Բիւրօն. «Բալկանեան մամուլ» (հնչակեան թերթ)[73], «Հայ մարտիկ»[74] (Սմբատի թերթը), «Ամրոց»,[75] «Զանգու»[76] (բոլշեւիկեան) - այդ բոլոր թերթերը ինձ եւ մեր շրջանը հռչակեցին «հակաբիւրօական», եւ իրենց ամբողջ համակրութեամբ պաշտպանեցին տեղիս «բիւրօական»ներին, իրենց ներքին գործակիցներին: Երբ յոյները մերժեցին ինձ անգամ տրանզիտ վիզա տալ, ես ընտրեցի Փարիզ-Մարսէյլ-Եգիպտոս ճամբան: Փարիզ հասնելուս պէս կարդացի «Հայ մարտիկ»ի մէջ. «Նժդեհը եկած է Եւրոպա համախմբելու հակաբիւրօական ուժերը»: «Զանգու»ն բոլշեւիկեան թերթը - տեղիս «բիւրօական»ների» բանսարկութեամբ «ՀՕԿ»ի ակումբների փակումը վերագրեց Դաշնակցութեան «Նժդեհեան ցեղակրօն թեւ»ին, եւ Խ. Հայաստանի ռադիոն սկսեց հայհոյել ու սպառնալ ինձ: Հակառակ որ [Հ.Յ.Դ.] Ամերիկայի կ[ենտրոնական] կոմիտէն որոշում էր առած, որ ես Ամերիկայէն վերադարձիս անցնիմ Բիւրօի վայրը եւ զեկուցում տամ Ամերիկայում ստեղծուած ծանր կացութեան մասին՝ Բիւրօն ինձ մուտքի վիզա չուղարկեց, որովհետեւ նա մութ հաշիւներով վճռած էր ինձ վանդակուած պահել Բալկանում, որպէսզի ես չկարողանամ խուսափել իմ դէմ նիւթուած դաւէն: Նա չէր ուզում, որ ես երեւամ այս կամ այն շրջանում, որովհետեւ չէր ուզում ուխտեր տեսնել այդ շրջաններում: Վերջապէս, մօտաւորապէս 2 $^1/_2$ տարի յետոյ, երբ նա այլեւս հասած էր իր նպատակին (ես դաւադրուած էի, իմ շրջանում արհեստական կերպով խմբակ մը հանած էին կ[ենտրոնակա]ն կ[ոմիտե]ի դէմ, ես հրաժարած էի, կ[ենտրոնական] կ[ոմիտ]էն) ինձ ուղարկեց վիզան: Հասայ Գահիրէ եւ հէնց առաջին օրը հիւանդացայ զզւանքից: Կաշւից դուրս կու գային ինձ համոզելու, թէ իմ լաւագոյն բարեկամներն են, որ գիտեն թէ դաւ կայ, բայց իրենք անմասն են, թէ ինձ պէտք է բժշկուել, օպերասիոնի ենթարկուել, թէ կուսակցութիւնը իմ առողջութիւնն է ուզում եւ ոչ թէ իմ գործը, եւ այլն: Տէր Մինասեան իբրեւ թէ մոռացել էր, որ 1 $^1/_2$ տարի առաջ նա իր մի նամակի մէջ ինձ

իրեն թշնամի է յայտարարել, իսկ ես իրեն՝ ընկերադաւ: Ես գնացել էի քաղաքական գործի համար՝ որոշ ծրագրով, անելիքների առաջարկներով, իսկ նրանք ինձ բժշկէ բժիշկ եւ հիւանդանոցէ հիւանդանոց կ'առաջնորդէին: Իսկ Բուլղարիոյ մէջ, այդ միեւնոյն օրերին, իրենց խմբակի միջոցաւ լուրեր կտարածէին, թէ Նժդեհը լքել է Բալկանի 500 ընկերների դատը եւ միացել Բիւրօին՝ այդ շրջանը ինձնից պաղեցնելու հաշւով: Զգւանքիս բաժակը լեցւած էր այլեւս, պէտք էր ազատւել կեղծիքի մթնոլորտէն, եւ պահանջեցի, որ իմ դրած լուրջ հարցերին պատասխանեն: «Վայրկեանը աննպաստ է, անելիք չունինք»՝ եղաւ Բիւրօի պատասխանը: Մեր վերջին նիստում ինձ վրան բաց կերպով ասացին՝ ա) եթէ ուզես, Ամերիկան կհրաժարւի Դուրեանի սպանութեան պատասխանատուութեան խնդիր յարուցելէ, բ) եթէ դու ճանաչես մեր նշանակած (կեղծ կազմէն բղխած) Բալկանի մարմինը՝ 6 դժգոհ շրջանն էլ կճանաչի:

Դա պատճառ դարձաւ, որ ծանր խօսքեր փոխանակենք: Ձեր կողմից Արսենին[77] քուէ տալը նրանք համարեցին իմ գործը: Համօն[78] ուզեց, որ ընկերաբար բաժանւենք, եւ դրա համար խնդրեցին, որ վերադառնալով Սօֆիա, փորձեմ վերականգնել Բալկանի միասնականութիւնը: Խոստացան չեղեալ յայտարարել Հայկի[79] եւ Սէթօի[80] դէմ հանւած որոշումը, անշուշտ, միշտ էլ հասկացնելով (սակարկելով), որ եթէ Բալկանի 500 ընկերները որեւէ ամբաստանագիր չուղարկեն Ընդհ.-[անուր] ժողովին՝ Բիւրօի դէմ: Վերադարձայ Սօֆիա, երկրորդ օրը բարեկամներէս գնդապետ Գրիգորովը լուր բերեց, թէ Բիւրօի գործակալներէն Թափառականը տարածում է, որ Բիւրօն կանչել է ու սպառնացել Նժդեհին՝ «եթէ չմիանաս մեզ եւ չլռես, քեզ սպանել կտանք»: Գերմարդկային համբերութեամբ անցայ շրջան: Բիւրօն աննշան թիւ ունի Ռուսչուկում եւ Սօֆիայում միայն: Ռուսչուկում հաշտեցրի կողմերը եւ անցայ Վառնա-Բուրգաս, ուր, անսպասելիօրէն(?) ստացայ կեղծ կազմէն բղխած մարմինէն մի գրութիւն, որով կյայտնւէր, թէ «Բիւրօն դէմ է հաշտութեան ձեւին»:

Կատաղութեանս մէջ կեղծ կ[ենտրոնակա]ն կ[ոմիտե]ի ներկայացուցիչ-նամակաբերին, ինձ կմնար վերադառնալ Սօֆիա եւ գրել Բիւրօին հետեւեալը. «Շրջանիս միասնականութեան եւ իմ անձի դէմ դաւ կայ: Նոր չէ, որ գրում եմ այդ մասին: Դաւում են Դաշնակցութեան թշնամիները: Այդ դաւը հեշտացնում են որոշ մարդիկ ներսէն: Դիւային յամառութեամբ տարւող այդ դաւը զինաթափել կարենալու համար անհրաժեշտ է ինձ վերստին ինքնամեկուսանալ: Եթէ ամէն կարելիութիւն չպէտք է ընձեռէք ինձ՝ մերկացնելու այդ դաւը, ինձ համարէք <u>պայմանադրաբար</u> հեռացած կուսակցութիւնից: Հիւանդի եւ դաւադրուածի իմ վիճակում ես այլ ելք չեմ գտնում: Ընկ[երական] բարեւներով՝ Նժդեհ, 1937, 17 դեկտ.[եմբերի]»:

Բիւրօն քար լռութիւն պահեց իմ այդ հրաժարականի մասին: Բացի այդ՝ Բիւրօին ուղղած եմ մի երկար գրութիւն, որի մէջ վերստին եւ վերստին Ռուբէնին անւանած եմ ընկերադաւ: Այդ գրութեանս պատճէն[ն] ուղարկւած է Յունաստան՝ ընկ[եր] Կարօ Գէորգեանին եւ Ռումանիա՝ ընկ[եր] Ս. Արարատեանին:

Գիտնալով հանդերձ, որ Ընդհ[անուր] ժողովը խարդախւած է, որ այդ ժողովին որոշ հաշիւներով մասնակցում են այն բոլորը - Լազեան, Սարունի, Խդրեան, որոնք Բիւրօի կողմից ուղարկւած էին մեր շրջանում կեղծ կազմ ստեղծելու եւ երկու քուէներ ապահովելու, ես Բիւրօ կոչւածին գրեցի հետեւեալը. «Դաշնակցական զինւորի արժանապատւութիւնս թոյլ չի տալիս գրի առնելու անձիս դէմ նիւթւած դաւի պատմութիւնը: Բալկանի, մասնաւորապէս, վերջին ամիսների դէպքերը եկան վճռապէս հաստատելու այն, որ տեղիս կազմին իմ դէմ սարքւած դաւը աւելի քստմնեցուցիչ է, քան կկարծէինք: Մեր կուսակցութեան պատմութեան մէջ նախընթաց չունեցող այդ վատութեան մասին ինձ անձնապէս պէտք է լսի Ընդ[հանուր] ժողովը: Առ այդ, խնդրում եմ ինձ վիզա եւ ճանապարհածախս հասցնել, որ մեկնեմ տեղդ: Եթէ Ռուբէնի՝ իմ հանդէպ տածած անձնական թշնամութիւնը պատճառ դարձաւ, որ դուք ինձ չը հրաւիրէք, խնդրեմ այս գրութիւնը համարել ուղղւած Ընդ[հանուր] ժողովին: Խնդրում եմ պատասխանել ինձ հեռագրով: Իմ անցեալ ճամբորդութեան վերաբերող հաշիւները կբերեմ հետս: Ընկ[երական] բարեւներով՝ Նժդեհ: 1938, 5 յուլիս, Սօֆիա»:

Ինձ չհրաւիրեցին: Եղածը Ընդհ[հանուր] ժողով չէր: Դաշնակցութեան պատմութեան մէջ նման խայտառակութիւն տեսնւած չէ: Դա վեց տարւայ ներքին դաւերի, հաշիւների ու վատութեանց արդիւնք էր: Միակ շրջանը, որը օրինաւոր պատգամաւորներ ունէր՝ դա Ամերիկան էր:

Ընդհ[հանուր] ժողովի վայրը ընտրեցին Եգիպտոսը, որպէսզի պատասխանատու ընկերները չմասնակցին խորհրդ[ակցական] ծայնով, նաեւ, որպէսզի անցանկալի համարւած պատգամաւորները զրկւեն Եգիպտոս մտնելու կարելութիւնէն: Յունաստանի երկու պատգամաւորներէն (երկուսն էլ՝ յունահպատակ) մէկին վիզա ուղարկեցին (իրենց գործակալին), միւսին՝ ոչ: Ֆրանսայէն որոշ ընկերներ չկարողացան մեկնել՝ արտօնութիւն «չկարողացան» ստանալ: Վրացեանը պայման դրեց իբրեւ պատգամաւոր մասնակցել ժողովին, եթէ՝

ա) ժողովը գումարւի ոչ-Եգիպտոսում, բ) եւ այդ ժողովին խորհրդ[ակցական] ծայնով մասնակցելու հրաւիրւեն բոլոր պատասխանատու

ընկերները: Նրա այդ առաջարկը մերժեց Բիւրօն, որով Վրացեանը հրաժարուեց մասնակցել ժողովին: Նա ընկ[եր] Ս. Արարատեանին գրած իր նամակի մէջ ասում է. ա) Այդ ժողովէն «միայն չարիք եմ սպասում», բ) Բիւրօն կործանում է կուսակցութիւնը, գ) Ուրիշ մարդ չգտնելով ժողովում, Բիւրօն իրեն վերընտրել պիտի տայ՝ մի երկու «հացկատակներ» էլ աւելացնելով իրեն իբրեւ «թարմութիւն»:

Ահա՛ այն «ժողովը», որից բղխած որոշումների բարոյական կանոնագրական արժէքը ամենայն իրաւամբ պէտք է համարել թքելի: Այդ խարդախուած ժողովը իրաւունք կունենար իմ խնդրով զբաղուելու միայն այն դէպքում, երբ. ա) հրաւիրէր ինձ լսելու, բ) կամ էլ բացատրութիւն պահանջէր ինձանից: Նա ոչ հրաւիրեց ինձ, ոչ էլ իմ դէմ նիւթուած դաւի մասին փաստեր ու փաստաթուղթեր պահանջեց: Նրան կմնար՝ ա) կամ հաստատել, որ ես հեռացուած եմ կուսակցութիւնից, բ) կամ էլ քննութիւն նշանակել: Ես հեռացած եմ պայմանադրաբար. 1) քանի դեռ թոյլ չի տրուիր ինձ տարածելու Ցեղակրօնութիւնը, 2) քանի դեռ Ցեղակրօնութեան դէմ ուղղուած Նիւ Եորքի պրովոկասիոնի հեղինակները կմնան ղեկավարութեան մէջ, 3) քանի դեռ պատժուած չեն Բուլղարիոյ մէջ իմ անձի դէմ դաւողները: Ես մինչեւ օրս չուզեցի հրապարակել իմ հրաժարականը երկու պատճառներով - նախ որ այս երկրում կուսակցութիւնները գոյութեան իրաւունք չունին, ապա որ որոշ պատասխանատու ընկերներ չուզեցին, որ այդ բանը անեմ: Երեւի կուզէիք, որ հրաժարականս յայտարարեմ, բայց դա քաղաքական-քրէական հետապնդումի պատճառ կդառնար երկրի իշխանութեան կողմից հէնց այս շրջանի եւ իմ անձի դէմ: Բիւրօն գիտէ, որ այս տեսակէտից իմ եւ Բալկանի դրութիւնը փափուկ է, եւ հէնց դրա համար էլ ընկերադաւութեան հասցրեց իր ընթացքը այս շրջանի դէմ: Թւում է, որ այսքանը կբաւէ, որ համոզուէք թէ՝

ա) Ն[յու] Եորքի ծանօթ պրովոկասիոնը ուղղուած էր Ցեղակրօնութեան ու իմ անձի դէմ,

բ) դաւադիրները ամէն բան արին, որ հայութիւնը ծանօթ արարքը վերագրէ ինձ,

գ) դաւը շարունակուեց իմ անձի եւ Ցեղակրօնութեան դէմ նա՛եւ Ամերիկայէն դուրս, Բալկանում,

դ) Բ[իւրո]ի հետագայ ընթացքը - արհեստական կերպով տեղումս թնճուկներ ստեղծել, կտրել Եւրոպայի ուխտերի կապը, իր մի անդամն ուղարկել Ամերիկա: Բալկան ուղարկել իմ դէմ դաւող Խդրեանին եւ այլոց, ինձ տարիներով վանդակած պահելը, իր մարդկանցից երեքին (որոնք հարբած վիճակում գիշերանց մտել էին իմ տուն եւ հրաշքով ազատուել իմ գնդակէն) կեղծ կ[ենտրոնական] կոմիտէի մէջ

մտցնել - հաստատելը - այդ բոլորը եկան հաստատելու, որ ծանօթ խնդրում դեր կատարողը եռագոյնը չէր,[1] այլ Ցեղակրօնութիւնը,

ե) Ընդ. ժողովը Եգիպտոս փախցնել-խարդախելը մի նպատակ ունէր - կեղծուած քուէներով ապահովել իր «անպատասխանատուութիւնը» եւ իր վերընտրութիւնը,

զ) Նժդեհից ազատուելով՝ վերջնականօրէն ջուրը ձգել Ցեղակրօնութիւնը համագաղութային շարժում դարձնելու կարելիութիւնն ու խնդիրը, եւ

է) իրեն, իր անունին էլ ներքին այնքան գայթակղութիւններով, դաւերով ու հոգեւոր աղէտի հաւասար պրովոկասիոններով հարուստ վեցամեայէն հեռացնել հանրութեան ուշադրութիւնը եւ զայն զբաղեցնել Նժդեհով:

Սիրելիներ, ըստ անգլիացի մի քաղաքագէտի Բրիտանիոյ միութեան գաղտնիքը պէտք է փնտրել նրանում, որ այդ երկրում ազնիւ մարդիկ նոյնքան յամարձակ են, որքան եւ լիրբերը, սրիկաները: Այդ միեւնոյն բունի մէջ պէտք է փնտրել ամէն մի հաւաքականութեան, մի կուսակցութեան ոյժի եւ մեծութեան գաղտնիքը: Այո՛, առանց բարոյական յամարձակութեան ու քաջութեան ամէն հաւաքականութիւն կդառնայ հոգեւոր սատակութիւն: Առանց այդ առաքինութեան մարդ չէ կարող մտածումի ու խղճմտանքի անկախութիւն ունենալ, իսկ առանց այդ վերջինի՝ ամէն դաշնակցական սուտ դաշնակցական է: Ի՞նչ անել, որպէսզի Դաշնակցութիւնը մաֆիայի վերածող վատերի համարձակութիւնը սանձի: Ի՞նչ անել, որ Դաշնակցութիւնը դադարի մի խումբ անպատասխանատու մարդկանց հարստութիւնը լինելէ: Ի՞նչ անել, որ դա դադարի ներքին դաւերի եւ մախանքների կրկէս լինելուց եւ ծառայի միայն եւ միայն այն բանին, որի համար աշխարհ է եկել - որ ազատ եւ ընդունակ լինի ծառայելու հայոց վտանգուած Հայրենիքին: Այդ հարցումները ունին մի հատիկ պատասխան. դուք եւ նմանները պէտք է լինեն աւելի համարձակ, քան ե՛ն՝ դեռ երէկ իրենց կաշին փրկած ընկերոջ դէմ դաւող վատերը: Էականը - դա դաւադրուած Նժդեհը չէ, խաչուած արդարութիւնը չէ, այլ Դաշնակցութեան բարոյականը, ինչպէս ասացի նամակիս սկզբում, բարոյական, առանց որին Դաշնակցութեան ղեկավարութիւնը «Ղարս»-երէն տարբեր բան չէ կարող տալ հայութեան:

Երէկ էր, ինչ թրքօ-բոլշեւիկ տապարից փրկեցի երկրի Դաշնակցութիւնը: Եւ այսօր փորձել՝ իր հացն ու անպատժելիութիւնը ապահովելու հաշուով այդ իմ փրկած կուսակցութիւնը հանել իմ անձի դէմ - այդ շնական ապերախտութիւնը ոչ թէ բարոյապէս մի կուսակցութիւն կարող է սպանել, այլեւ անբարոյացնել մի ամբողջ ժողովուրդ:

---

[1] Բիւրօի մարդիկ մեր շրջանում ներքնապէս հրաժարուած են եռագոյնէն՝ հակադաշնակցականների աջակցութիւնը ապահովելու համար:

Կուզէի, որ յանուն մեր ժողովրդի վտանգաւոր ապագայի, անէք հետեւեալը.

ա) Մի շարք ստորագրութիւններով դիմել Բիւրօին եւ պահանջել՝ 1) Նյու[Եորքի պրովոկասիոնի պատասխանատուութեան խնդիրը յանձնել քննելու Եւրոպայի դաշն[ակցական] աւագ ընկերներին, 2) որովհետեւ ծանօթ դէպքը զուգադիպեց Ցեղակրօն շարժման սկզբին, եւ եղածը վերագրուեց Նժդեհին, մի բան, որից մեծապէս վնասուեց Ցեղակրօնութիւնը՝ խնդրում է հրապարակել Նժդեհի 17 դեկտ[եմբեր]ի հրաժարականը, եւ Բիւրօ-Նժդեհ վէճը յանձնել նոյնպէս Եւրոպայի աւագ ընկերների քննութեան:

բ) Լուսաբանել Ուխտերը եւ նրանց կենտ[րոնական] վարչութեան կողմից եւս մի գրութիւն ուղղել Բիւրօին եւ հասկացնել, որ Ցեղակրօնութեան ու Նժդեհի դէմ գոյութիւն ունեցող թշնամանքը չէ կարող չխռովել մեր ուխտերը:

գ) Կապւել «Տարօն Տուրուբերան» հայրենակցա[կա]նների կ[ենտրոնական] վարչութեան (Akron, Ohio):

դ) Ազդել Հ[այկական] Կ[արմիր] խաչի կ[ենտրոնական] վարչութեան վրայ, որի նիւթական միջոցներով իմ եւ շրջանիս դէմ դաւողները փորձում են անբարոյացնել Գ[ութեան] խաչի որոշ տար[ր]երը, դադարեցնել տէր նիւթական ամէն աջակցութիւն Գ[ութեան] խաչի Սօֆիայի աւանական վարչութեան:

ե) Դիմել ընկերներ Դարբինեանին, դոքտ. Բարսեղեանին եւ Դաշճեանին, որ զգաստութեան հրաւիրեն Բիւրօն:

զ) Արսէնը - Ցեղակրօնութեան եւ իմ հին թշնամին - վերադարձել է որոշ մութ յանձնառութիւններով (Տարօնականութեան եւ Ցեղակրօնութեան դէմ գործելու յանձնառութեամբ) - նախազգուշացրէ՛ք:

է) Պահանջէք, որ իբրեւ գործիչ տեղդ ուղարկեն Ս. Արարատեանին կամ Կարօ Գէորգեանին:

Համբոյրներով՝ **Նժդեհ**

Եղէ՛ք արագ, քայլեր առէք վայրկեան առաջ, եւ ինձ գրէք յաճախ, որ իրազեկ լինեմ ձեր առած քայլերին:

Նոյնը

17.

Սիր[ելի] Օհաննէս,

Նամակդ, ինչպէս եւ ընկերներ՝ Հայթաեանի, Պարսամեանի, Սվաճեանի, Սողիկեանի եւ Վարժապետեանի հաւաքական երկտողը ստացած եմ:

Շնորհակալութիւն ե՛ւ քեզ ե՛ւ ընկերներին, որոնց այնքա՜ն քաղցրութեամբ կյիշեմ դառնութեանս, մասնաւորապէս, դառնութեանս ժամերին:

Գիտեմ, որ բոլորդ էլ դառնացած էք, որ Դաշնակցութիւնը չաշխատեց՝ Ցեղակրօնութիւնը համագաղութային շարժում դարձնելու: Մեր թշնամին - հակազգայնական հոսանքները - մի պահ սարսափեց, տեսնելով թէ ինչպէս Ցեղակրօնութիւնը անտառում ծագած հրդեհի նման, ճարակում է մեր նորահաս սերունդը: Թշնամին խելօք էր եւ արթուն,- նա ժամանակին աղմկեց, հայհոյեց, խեղաթիւրեց, որ կասեցնէ մեր երիտասարդ շարժման թափը: Եւ այն ինչ չյաջողեց կատարել մեր թշնամուն, կատարեցին մեր դժբախտ կուսակցութեան մէջ բոյն դրած փոքրիկ եսերը, նախանձները, գաղափարախօսական երկուութիւնը, սեփական օրիենտասիոնի պակասը, քաղաքական համլեթականութիւնը, անկամութիւնը, ռազմական խանդի անկումը, հասարակագիտական տգիտութիւնը եւ այլն:

Շնորհիւ ներքին չկամութեան ու անճարակութեան՝ Ցեղակրօն շարժման հոգեւոր դինամիզմը մնաց մինչեւ օրս չօգտագործուած: Արտաքին թշնամին զինակիցներ գտաւ Դաշնակցութեան մէջ եւ դաւեց Ցեղակրօնութեան դէմ: Եւ այդ այն ժամանակ, երբ պատերազմը դղրդագին քայլերով կմօտենայ մեր երկրագնդին, երբ քեմալական Թուրքիոյ մէջ զէնքի տակ կմտնեն կանայք եւ աղջիկները: Մարտական կուսակցութիւն ենք, բայց մարտիկն ու մարտական խանդը մեռած է մեր մէջ: Ցեղակրօնութեան դէմ դաւեցին նրանք, որոնք ճակատ չէր տեսած, նրանք, որոնց «սօցիալիզմ»ը, մեր օրով, բոլշեւիկեան լակոտներ տուեց Հայաստանին, նրանք, որոնց արուեստն է գլուխ պահել, թէկուզ մեր ժողովուրդը անգլուխ թողնելու գնով: Խեղճ ենք, խեղճ, մեր ժողովրդի չափ խեղճ է եւ մեր կուսակցութիւնը: Չգիտես, թէ որի՞ դէմ դարձնես հարուածդ, որի՞ց պաշտպանւել՝ արտաքի՞ն թէ ներքին թշնամիներից: Երրորդ տարին է, այժմ Ամերիկայում մենք պէտք է ունենայինք Ցեղակրօն լեգիոններ՝ մահաւան ու վտանգի հետ խաղալու տրամադիր: Այժմ մենք տասնեակ հազարի հասնող Ցեղակրօններ պէտք է ունենայինք Սփիւռքի մէջ, գաղութ գաղութ: Իսկ այսօ՞ր, Ամերիկայէն եւ, մասամբ, Բուլղարիայէն դուրս, հայ նորահասը հոգեւոր իբիշութեամբ[81] է անցկացնում իր ժամանակը: Թուրքն իր կինը տղամարդ-զինւոր է դարձնում այսօր, մենք, իսկ մե՞նք...

Մեր երիտասարդութիւնը հոգեպէս մանրանում է, մեռնում: Սուտ սօցիալիզմ-նիւթապաշտիկ սրիկայութիւն քարոզողները տեսնում են այդ, բայց եւ այնպէս անտարբեր են՝ a la սոցիալիստ: Մեռնու՞մ է - թող

մեռնի նորահաս սերունդը, միայն թէ մեր սոցիալիստների օձաթոյն նախանձն ապրի:

Օհաննէս ջան, հետեւում եմ «Հայրենիք»ներին, եւ որեւէ Ցեղակրօն պրոպագանդ, աշխատանք չեմ տեսնում: Առաջին տարին մեր ազգային բոլոր տօները թողնւած էր մեր ուխտերին տօնելու: Վերջին տարիները այդ նախաձեռնութիւնը զլացւած է Ուխտերին: Դա լաւ չէ: Բոլոր տօնակատարութիւնները պէտք է թողնել Ուխտերին: Այդպիսով, կարելի է նրանց մէջ մշակել պատասխանատուութեան գիտակցութիւնը:

«Weekly»-ին գործածում է Ցեղակրօն անունը միայն, եւ ոչ աւելին: Ցեղի, Ցեղակրօնութեան, իր դաւանանքի մասին ոչի՛նչ եւ ոչի՛նչ: Միայն սպորտը չի բաւեր: Դա անհրաժեշտ է, բայց ոչ ամէն ինչ: Ստիպւած եմ շուտով մի յօդւածաշարք գրել:

Ի՞նչ է անում Կոպերնիկը:

Գրի՛ր ինձ նրա հասցէն:

Համբոյրներ բոլորիդ՝ **Նժդեհ**

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքը ԱՄՆ-ում Ցեղակրոն Ուխտերի վարչության առաջին ատենապետ Ասատուր (Արթուր) Կիրակոսյանի մասին է:
2. Արտաշես Կարապետի Հովսեփյան (1877-1962) - գրող, հասարակական գործիչ:
3. Խոսքը ԱՄՆ-ում Ցեղակրոն շարժման գործիչ, 1932-1936թթ. Ալիստոնում հրատարակվող «Արփի» պարբերականի խմբագիր Արմենակ Բարսեղյանի մասին է:
4. ԱՄՆ-ի Ցեղակրոն Ուխտերի «Հայրենիք» անգլերեն շաբաթաթերթ, հրատարակվում էր 1934թ. մարտից:
5. Ցեղակրօնների օրը նշվում է հունվարի 14-ին:
6. Խոսքը ԱՄՆ-ի Հայ կարմիր խաչի Կենտրոնական վարչության քարտուղարուհի Սիրանուշ Տեստեկյանի մասին է:
7. Խոսքը Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցի մասին է, ով 1934թ. որպես Սփյուռքում հայրապետական լիազոր պատվիրակ մեկնեց էջմիածինից արտասահման:
8. Հայաստանի օգնության կոմիտե, որը ստեղծվել էր 1921թ. սփյուռքահայության օգնությունը Հայաստանի վերաշինությանը կազմակերպելու համար:
9. Խոսքը 1933թ. դեկտեմբերի 24-ին Նյու Յորքի Սբ. Խաչ եկեղեցում ամերիկահայոց հոգևոր առաջնորդ Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի սպանության մասնակիցների մասին է:
10. Խոսքը Հ.Յ.Դ. հայտնի գործիչ Կոպեռնիկ Թանդրճյանի մասին է:
11. Թափառական - Գևորգ Հալաճյան:
12. Խոսքը Գասպար Իփեկյանի մասին է:
13. Խոսքը Ռուբեն Տեր-Մինասյանի մասին է:
14. Խոսքը Հովհաննես Քաջազնունու մասին է, որ հրատարակեց «Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս» գիրքը:
15. Արսեն Միքայելյան (Տեր-Հովհաննիսյան) 1919թ. Փարիզի Ազգային և Երևանում Հ.Յ.Դ. 9-րդ համագումարների մասնակից, 1940թ. Արգենտինիայում «Արմենիա» թերթի խմբագիր:
16. Շավարշ Ալեքսանի Միսաքյան (1884-1957) – Փարիզում հրատարակվող «Յառաջ» թերթի խմբագիր:
17. 1920-ական թվերին երիտասարդության շրջանում մեծ հեղինակություն ունեցող ամերիկյան պար, որը տարածվեց նաև Եվրոպայում:
18. Ծաղրածու:
19. Լարախաղաց:
20. Հավանաբար, խոսքը Գաբրիել Լազյանի մասին է:
21. Խոսքը Ռուբեն Տեր-Մինասյանի մասին է:
22. Նամակը վնասված է և մի քանի բառ անընթեռնելի:
23. Խոսքը Ռուբեն Տեր-Մինասյանի մասին է:

24. Եռօրյա թերթ, լույս է տեսել Բուխարեստում 1932-1939թթ., խմբագիր Հ. Սիրունի:
25. Վահան Բեգլարի Նավասարդյան (1888-1956) – Հ.Յ.Դ. հայտնի գործիչ, եղել է Կահիրեում հրատարակվող «Հուսաբեր» թերթի խմբագիր:
26. Նկատի ունի Վահան Նաւասարդյանին:
27. Թուրքերեն կնշանակի՝ սատանա:
28. Նկատի ունի Ռուբեն Տեր-Մինասյանին:
29. Դրաստամատ Կանայանը իր առաքելության մասին մանրամասն պատմել է Սիմոն Վրացյանին գրած նամակում: Տես «Բամբեր Հայաստանի արխիվների», 2006, թիվ 1, էջ 129-137:
30. Խորհրդական:
31. Խոսքը Արամ Հակոբյանի և «Նոր խոսք» թերթի խմբագիր Օնիկ Մխիթարյանի մասին է:
32. Խոսքը Ռուբեն Տեր-Մինասյանի մասին է:
33. Խոսքը Արշակ Ջամալյանի մասին է:
34. Թորբա - տոպրակ:
35. Խոսքը Սիմոն Վրացյանի մասին է:
36. Հ. Յ. Դաշնակցության օրը նշվում է հոկտեմբերի 1-ին:
37. Խոսքը նորից Սիմոն Վրացյանի մասին է:
38. Նկատի ունի Վահան Նաւասարդյանին:
39. «Ցեղ եւ Հայրենիք» կիսամսյա հանդեսը հրատարակվել է 1936թ. Սոֆիայում Հայկ Ասատրյանի և Ներսես Աստվածատրյանի խմբագրությամբ:
40. Խոսքը Հայկ Ասատրյանի մասին է:
41. Խոսքը Թափառական - Գ. Հալաճյանի, Արամ Հակոբյանի և Օնիկ Մխիթարյանի մասին է:
42. Խոսքը Մերուժան Օգանյանի մասին է:
43. Պետք է լինի Աստվածատրյան: Ներսես Աստվածատուրյանը Ցեղակրոն և Տարոնական Շարժումների սյուներից է: Ծնվել է Սկյուտարում (Կ.Պոլիս), ծագումով տարոնցի է: Եղել է Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միության Բուլղարիայի շրջանի պատասխանատու գործիչ: Վարել է առևտրական լայն գործունեություն՝ նյութապես զգալիորեն օժանդակելով ազգայնական շարժումներին: 1944թ. ձերբակալվել է ԽՍՀՄ Պետանվտանգության կոմիտեի կողմից, մահացել է Ուրալյան գաղութում:
44. Բալկան ասելով նկատի ունի Հ.Յ.Դ. Բալկանյան կենտրոնական կոմիտեությունը:
45. Այս վերջին երկու տողը Գ. Նժդեհը նամակը վերջացնելուց հետո տեղ չլինելու պատճառով հավելել է նամակի առաջին էջի սկզբին:
46. Արիս (Արիստակես) Տեր-Իսրայելյան - ծնվել է Բուլանըխում: Մանուկ հասակում ծնողների հետ տեղափոխվել է էջմիածին, ուր

սովորել է Գևորգյան ճեմարանում: 1912թ. անցել է ԱՄՆ և 1917թ. դարձել Տարոն-Տուրուբերան Հայրենակցական Միության հիմնադիրներից: Մինչև կյանքի վերջը ապրել է նյութական ծանր պայմաններում: Մահացել է 1942թ. դեկտեմբերի 18-ին, ԱՄՆ-ի Էքրոն Օհայո քաղաքում:
47. Հակոբ Սիրունի (1890-1973) - գրող, հրապարակախոս, Բուխարեստում լույս տեսնող «Արազ» թերթի խմբագիր:
48. Ս. Սարունի, 1927թ. Բուխարեստում խմբագրել է «Հրազդան» ամսաթերթը:
49. Աշոտ Արծրունին (1902-1979), մի քանի անգամ գաղտնի կերպով եղել է Հայաստանում, ԽՍՀՄ-ում կազմակերպել Հ.Յ.Դ. կենտրոնական կոմիտեների գաղտնի խորհրդաժողով:
50. Խոսքը Մերուժան Օգանյանի մասին է:
51. Հավանաբար նկատի ունի Հ.Յ.Դ. գործիչ Վ. Քրմոյանին:
52. Նկատի ունի Ս. Վրացյանին:
53. Նկատի ունի Կոպեռնիկ Թանդրճյանին:
54. Այսքանը հակառակ շարքով գրված է թղթի վերևում, որը հավելագիր է:
55. Դարբինյան Ռուբեն (Չիլինկիրյան Արտաշես) - Հ.Յ.Դ. ղեկավար գործիչ, «Հայրենիք» ամսագրի խմբագիր:
56. «Հայրենիք» ամսագրի:
57. Մեկ բառ անընթեռնելի է:
58. Թուրքերեն՝ կեցցե:
59. Խոսքը Աթենքում հրապարակվող «Նոր օր» օրաթերթի խմբագիր Անտոն Կազելի մասին է:
60. Խոսքը Համո Օհանջանյանի մասին է:
61. Անվանի ազգայնական գործիչ, հրապարակախոս Կարո Ռուբենի Գևորգյանը ծնվել է 1892թ. Կյումուլճինայում (Հունաստան): 1923-27թթ. Սալոնիկում խմբագրել է «Ալիք», ապա 1928-37թթ.՝ «Հորիզոն» թերթերը, 1937-44թթ. Հայկ Ասատրյանի հետ՝ Ցեղակրոն Շարժման «Ռազմիկ» պաշտոնաթերթը, որը տպագրվել է Սոֆիայում, ապա՝ Պլովդիվում, 1954-66թթ. Բեյրութում՝ «Ամենուն տարեգիրք» մեծարժեք տարեգիրքը, որտեղ երկարատև մոռացությունից հետո առաջին անգամ ներկայացրել և արժեքավորել է Գարեգին Նժդեհի և Հայկ Ասատրյանի կյանքն ու գործունեությունը: Մահացել է 1975թ. նոյեմբերի 11-ին Բեյրութում:
62. Տես ծանոթագրություն թիվ 9:
63. Նկատի ունի Կարսի անկումը 1920թ.:
64. Վերածին Մինաս Գաբրիելի (1882-1945) – սփյուռքահայ անվանի գրող, աջակցել է Ցեղակրոն շարժմանը:

65. Խոսքը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ֆրանսիական բանակի կազմում Պաղեստինում՝ Արարայում կռված Արևելյան Հայկական լեգեոնի վետերանների կոմիտեի մասին է:
66. Տես ծանոթագրություն թիվ 9:
67. Պեյո Յավորով (Պ. Կրաչոլով, 1878-1914), բուլղար բանաստեղծ, Թուրքիայի կողմից 1890-ական թվականներին կազմակերպած հայկական կոտորածների տպավորությոն տակ գրել է «Հայեր» նշանավոր բանաստեղծությունը:
68. Միլլեր Եվգենի Կարլի - ռուս գեներալ, Ֆրանսիայում գործող Ռուսական համազորային միության ղեկավար, 1937թ. առևանգվել է խորհրդային գործակալների կողմից:
69. Սկոբլին Նիկոլայ Վլադիմիրի - ռուս գեներալ, օգնել է խորհրդային գործակալներին առևանգելու գեներալ Միլլերին:
70. Նկատի ունի կենտրոնական կոմիտե:
71. Արշակ Ջամալյան (1882-1940) – Հ.Յ.Դ. հայտնի գործիչ:
72. Նկատի ունի Քրիստափոր Միքայելյանին:
73. «Պալքանեան մամուլ» - ՍԴՀԿ շաբաթաթերթ, ապա եռօրյա, լույս է տեսել Ռուշչուկում 1931-1945թթ.:
74. Կիսամսյա պաշտոնաթերթ հին հայ մարտիկների կազմակերպության, լույս է տեսել Մարսելում 1936-1938թթ.:
75. Շաբաթաթերթ Ա. Ազատական ուխտի, լույս է տեսել Աթենքում 1936-1937թթ.:
76. Շաբաթաթերթ, լույս է տեսել Փարիզում 1935-1938թթ.:
77. Խոսքը Արսեն Միքայելյանի մասին է:
78. Խոսքը Համո Օհանջանյանի մասին է:
79. Խոսքը Հայկ Ասատրյանի մասին է:
80. Խոսքը Սեդրակ Ջալալյանի մասին է:
81. Այդպես է տեքստում, պետք է լինի իբշիրությամբ, որ նշանակում է անառակությամբ: